

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով  
ձևափոխել կամ օպտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԼԵՔՍՅԱՆ ՌԴՅՈՒԼՈՎ

14526



891.71  
0-32

ԹԵՏՐՈՒԹՅՈՒՆ

1932

ՅԵՐԵՎԱՆ

CA  
313

ԱՐԵՎԻՑ ՊԿՈՒՆՎ

891.89  
0-32

19 NOV 2010

# Կ Ա Մ Ո

ՊԱՏՇԱՇՎ

ԲԻՐԴ. Ա. ՉՈՒՐԲԻՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍՏԻՎԱ  
ՊՈՏՈԽԱՅԱՆԻ  
Ակադեմիա Խան  
ՀՀ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅԱԼՔԻ ԲՈՒԺ

ՎԵՐԵՎԱՆ

1982

14526

Այս պատմվածքը նվիրվում է Կռվկասյան հաշակավոր հեղափոխական ընկեր Կամո Պետրոսյանի հիշատակին, վորի կյանքը լի յեր հեղափոխական օրիորդությամբ, վտանգներով ու առավանքով:

Գատմածքը ընդգրկում է միայն մի քանի եպիզոդ՝ դեպքերի այն արտասովոր ցլբայից, վոր աղրել և Կամոն: Հիմնականում պատմվածքը, վոր չտփով նա վերաբերում է Կամոյին, համարյա ճշգրիտ և ողատմականորեն: Լիովին ճշառված չեր կարելի համարել՝ համապատասխան նյութերի բացակայության պատճառով: Ինչ վերաբերում և գրվածքի մյուս դեմքերին, վորոնց մասին տվյալներ համարյա չկան, հեղինակը ինդրում և այժմ ապրողներին, չդժգոհել իրենից, վոր իրականում նրանց խաղացոծ դերի պատմակերացման մեջ թույլ և ավել այս կամ այն պնդառությունը:

ՀԵՂԻՆԱԿ



56132-66

1907 թիվն եր այդ :

Թիֆլիսի ծայրամասի փոքրիկ, ցածր ու ծխոտած սենյակում, պատառոտուն կարպետներով ծածկված նեղ ու կոշա մահճակալի վրա քնել եր մի մարդ : Նա ծալել եր թերու գլխի տակ և լայնորեն ձգել եր վոտքերը, խորը շունչ եր քաշում և քաղցր խոմիում : Այդպես քնում են մարդիկ ծանր հոգնածությունից՝ և անքուն դիշերներից հետո :

Վոտքերը ծուռը սեղանի վրա, վոր գտնվում եր մահճակալի կողքին, լավաշի կտոր կար և մի քանի հատ ել ցաք ու ցրիկ գրքեր՝ մաշված կողերով :

Ժամանակ առ ժամանակ կամացուկ սենյակ եյին նայում մարդիկ, հայացք ձգում քնածի կողմբ և սուս ու փուս նորից դուռը ծածկում :

Այդպես շարունակվեց յերկու թե յերեք ժամ :

Հետո քնածը հանկարծ զարթնեց և վայրկենապես նստեց անկողնում՝ ձեռքերով ճակատը շփելով : Այսպես մեկն զարթնում են տնակնկալ խոռվության և վասանդի սովոր մարդիկ :

Նա շտապով հանեց գրպանից ժամացույցը և նայեց : Հետո թռավ սենյակի մի անկյունը, ուր կիտված էյին հին շորեր, քրքրեց և ջոկեց այնտեղից մի քանի կեղտու չուլեր, —դա այն հաղուստն եր, վոր կրում էյին թիֆլիսի կինտոները, շրջիկ մրգավաճառները :

Նա արագ հագավ այդ շորերը : Այնուհետեւ սեղանի  
արկղից դուրս հանեց հայելու մի կտոր և թատրոնա-  
կան սափրիչի պարագաներ :

Մի քանի բոպեյից հետո նրա սափրած յերեսն ար-  
դեն զարդարում եյին սև, թավ բեխերը և գանգուր ու  
խիտ մորուքը, —կամոն անձանաչելի յեր դարձել :

Դրանից հետո նա զննեց ինձորով լիքը տեսիուրը,  
վորպիսին կրում են կինտոներն իրենց գվխի վրա, և ա-  
գահ ու արագ սկսեց ուտել սեղանին դրված լավաշը :  
Այդ ժամանակ դուռը նորից բացվեց և սենյակի մտավ  
բարձրահասակ, լղար մի մարդ՝ կովկասյան աղջային  
տարագով : Երա գունատ, վոսկըստ դեմքն արծվային  
քթով՝ խիստ և ծանր տպավորություն եր գործում :

Քնից զարթնովը կովկասյան հռչակավոր հեղափո-  
խական—բայլը կամոն եր, իսկ ներս յեկողը կոտեն,  
նրա մոտիկ զինակիցն ու ընկերը :

— Զարթնեցի՞ր :

— Հա : Շատ քնեցի : Ո՞ւշ և արգեն :

— Վոչինչ : Պետք և յերբեմիցե կարգին քնել : Ա-  
ռանց դրան մեքենան կանգ կամոնի :

— Ի՞նչ նորություն :

Կոտեն շարժեց դուխը :

— Վոչ մի լավ լուր : Տպարանի գործը վատ ե :  
Բոլորովին խանդարվել ե : Թոռոցիկները ժամկետին  
լույս չեն տեսնի :

— Պիտի լույս տեսնեն : Խոստացված ե :

— Այդ դեպքում ինքող դնա այնտեղ և գործը կար-  
դավորիք :

— Ինչ արած, կերթանք : Բայց ինչ սպասում են  
մի ուրիշ տեղ :

— Վոչինչ, թող սպասեն : Այստեղ ավելի կարեսը  
է :

— Գնանք :

Յեվ նրանք կամացուկ, դոներից դուրս նայելով,  
մեկը մյուսի յետելից դուրս յեկան սենյակից :

Քաղաքում նրանք իրարից բաժան եյին գնում, ջո-  
կելով նեղ, խուլ նրբափողոցներ, ուր քիչ անցորդ կար,  
իսկ մարդաշատ փողոցները կորելիս՝ խառնվում եյին  
ամբոխին :

Կամոն տեսիուրը դվիխն գրած՝ բարձրածայն գո-  
վում եր իր ապրանքը : Խաչաձեռող փողոցներից մեկում  
նա մոտեցավ վուտիկանին, վոր մինչ այդ ուշադիր նա-  
յում եր նրան : Ժամանակուց ատամները ցույց տալով՝  
կամոն նրան ինձոր առաջարկեց : Վոստիկանը վերցրեց  
խնձորը և ճպացնելով կծեց, առանց նույնիսկ գլխի շար-  
ժումով անդամ չնորհակալություն հայտնելու :

Կամոյի կողմից այդ քայլն արգեն չարածճիություն  
եր, բայց լուրջ մարդիկ ել յերբեմն չարածճիություն են  
թույլ տալիս իրենց :

Քաղաքի հեռավոր արվարձաններից մեկում, չորս  
կողմ դիտելով—արդյոք վորես մեկը չի հետեւում ի-  
րենց—կամոնուու կոտեն ծլկեցին մի փոքրիկ բակի  
մեջ, վոր շրջապատված եր խաղողի վորթերով ծածկ-  
ված պատով : Բակն ամայի եր թվում և խոտ եր բու-  
ռել այնտեղ : Մի կիսավեր իսրճիթ կար, իսկ խորքում,  
յետել պատի մոտ—հին, բարձիթողի արված, ցամաքած  
ջրհոր : Բուրդը գզգզված իշուկը կրծում եր խոտը, հա-  
վերը կչկչալով պեղում եյին ավաղը . մարդիկ չեյին յե-  
րկում :

Կամոն և կոտեն մոտեցան ջրհորին, մի անգամ ել

նայեցին շուրջը և յերկուսով, մեկը մյուսի յետից պարանից բռնած՝ արագ իջան մինչև ջրհորի ցամաքած հաստակը։ Այնտեղ բացվում եր ցածր անցք դեպի մի կողմ։ Այդ ցածր ու խոնավ անցքով, վոր պատաժ եր անհարթ քարերով, պետք եր չորեքթաթ սողալ մոտ տապը մետր մինչև այն տեղը, ուր փայտե դուռն եր։

Կամոն ատրճանակի կոժով հնագ անդամ բաղկաց դուռը—յերկու անդամ ստեպ, ընդմիջում և հետո դարձալ յերեք անդամ ստեպ։

Դուռը բացվեց և նրանք ներս մտան։

— Եւե՛, բարե ընկերներ։

Դա մի խորանարդածե գետնափոր եր, ուր դրված եր տպագրական ձեռաշարժ մեքենան և դարսված եյին թղթի մի քանի հակեր,—բայլշեկիների առասպելական անկեդալ տպարանը, վորը գտնելու համար կովկասի պոլիցիան ու ժանդարմերիան բոլորովին վոտքից ու հալից ընկել եյին։

— Ի՞նչ ե յեղել, ընկերներ։

— Մեքենան չի աշխատում, ընկե՛ր կամո։  
— Ցո՛ւյց տուր, թե վո՞նց ե աշխատում։

Յեվ կամոն խկույն կպավ սովորական գործին՝ քթի տակ մի յերգ մոռմացնելով։ Նրա ձեռքերն շտապ դործում եյին։

— Այս այսպես ե հարկավոր . . . իսկ սա այսպես . . . Հասկացա՞ք։ Այդ հասկանալ ե պետք, կարող ե ամեն որ կրկնվել, ամեն մեկը պետք ե հասկանա։

Կամոն ուղղվեց և ձեռքով խփեց յերկու ընկերների ուստին, վորոնք մինչև նրա դալն անողնական նստել եյին դազգահի առջե։

— Հեղափոխականը պետք ե ամեն ինչ իմանա,

նույնիսկ այն, թե ինչպես են կարկանդակ շինում։ Գուշ հարկ կլինի հրուշակադործ դառնալու։

Տպագրիչներից մեկը քաշվելով հարցրեց.

— Ընկեր կամո, շո՞ւտ կլինի . . . շո՞ւտ կլինի . . .

— Ի՞նչը շուտ կլինի։

— Մի վորեւ յելույթ։

Կամոն ծիծաղեց։

— Ասում ես՝ յելույթ։ Իսկ սպասել չդիտես։ Համար թե ծիծաղելի յես . . .

— Ընկեր կամո, ախր մենք լուրջ ենք ասում . . .

Զանձրացանք այստեղ։ Ինչպես բանտում . . . Համբերություններս սպասվեց։

Կամոն կրկին գգվանքով թոթվեց նրանց ուսեբը։

— Խոսելու ժամանակ չկա։ Մոտ որերս խորհրդակցություն ե լինելու, լեռներից ընկերներ են դալու, այն ժամանակ ամեն բան կքննենք։ Աշխատեցէ՛ք, աշխատեցե՛ք։

Կոտեն հարցրեց.

— Իսկ հիմի ո՞ւր ենք գնալու։

— Հիմա յես դեպի լաբորատորիա, իսկ դու առայժմ մնա այստեղ. քեզ կարիք չկա ինձ հետ այնտեղ գնալու։

Յեվ կամոն կռացած՝ անձայն հեռացավ փոքրիկ դռնով, ճամբին չոշափելով իր ատրճանակը և դասակորելով տեփուրի ապրանքը։

Թիֆլիսից ժանդարմական վարչության պետի ընդունարանում հավաքվել եյին ախրանկայի մի քանի ագնստներ՝ պետին զեկուցում տալու համար։ Դրանք զանազան արտաքինի և զանազան տիպի մարդիկ եյին, վո-

ըսնք հագնված ելին բատ իրենց կատարած լրտեսության պարտականությունից բոլխող վորոշ առանձնահատուկ պայմանների : Սակայն այդ բոլոր մարդկանց դեմքերին կար ինչ վսր ընդհանուր կնիք կեղծիքի և ստորաքարչության, վորը նրանց հարազատ յեղբայրներ եր դարձնում :

Ընդունելության սպասելով՝ նրանք խոսակցում ելին իրենց ծառայության և անձնականին վերաբերող դանազան մանրամասնությունների շուրջը, բայց այդ ամենորյա խոսակցությունների մեջ նկատվում եր մի ինչ վոր անհանդատություն, վոր առաջացել եր արտաքին պայմաններից : Կովկասում և մասնավորապես Թիֆլիսում աճում եր հեղափոխական շարժումը բանվորների և մասամբ գյուղացիների մեջ : Իշխանության ամենախիստ հրամանները հեղափոխական կազմակերպությունները յերեան հանելու իմաստով՝ այնքան ել չեշտ չեր իրագործել հեղափոխականորեն արամադրված աղքաբնակչության շրջանում, վոր թագդինում եր հեղափոխականներին և ամեն կերպ ոգնում նրանց :

Ախրանկայի աշխատակիցներից պահանջում ելին . . . առնիջապես հայտնաբերել հեղափոխական կազմակերպությունները : Զե՞ս կարող—կո՞րի գնա . . . կամ . . . կամ հնարի՞ր, ստեղծիր այդպիսի կազմակերպություններ :

Ու բոլոր լրտեսները, փոքր ու մեծ շպիկները, վերեկից մինչև վար, կաշվից դուրս ելին գալիս, վորպեսզի գտնեն, պրովակացիայի յենթարկեն կամ մի վորմե բան հնարեն : Պատվի և ծառայության, կարիյերայի ինդիր եր այդ :

Դեսի համհարզը կիսաբաց դռան միջով մեկ առ մեկ ներս եր կանչում ագենտներին և նրանք վաղում ելին

կանչին՝ ճամբին մաղերը հարթելով և վոտքերը հատաւ կին խվելով :

Դեսի մոտից նրանք հաճախ հեռանում ելին կնճռոտված և գլուխները տարրութերելով . . . այդ տեսակցությունը նրանց հաճելի բան չեր խոստանում :

Ահա զուրաը կրկին բացվեց մի փոքր :

— Խուճուճավոր :

Ճաղատ և ուռած դեմքով մի մարդ շտապով հանգրեց ծխախոտը, դրստեց պիթակը և կողքեհան ներս մտավ առանձնասենյակի բացված դռնից :

Ուղիղ զոան գիմացը, հարուստ գրասեղանի առջև նստել եր ժանդարմական գնդապետը՝ ճոխ բեխերով և խնամքով սանրած մորուքով : Նա կիսեց խիտ հոնքերը և ցցված մատով ցույց տվեց աթոռը :

— Դե՞ :

Խուճուճավորը շափականց զգուշությամբ նստեց և խուզ կոնչաց՝ բողազը մաքրելով :

Դե՞ : Յես հարցնում եմ :

— Ի՞նչի մասին կհրամայեք :

— Ի՞նչի մասին : Հիմարությունն : Հերվա ձյան մասին . . . ի՞նչ համաձնարարություն եր տրված :

— Յերկաթուղային արհեստանոցներում հերթափոխության միջացին թուուցիկ և գտնված :

— Ո՞վ ե բաժանել :

— Բայլշեիկները :

— Ո՞վել յելույթ ունեցան : Ինչո՞ւ չըսնեցիք : Խուճաճակորն անհանդիստ եր աթոռի վրա, հետո վեր կացավ :

— Զհաջողվեց ճշտել, վորովհետեւ . . .

— Ի՞նչպես :

Գնդապետը նույնպես վեր կացավ՝ ձգվելով իր ամբողջ բարձր բոյով :

— Ի՞նչպես, սատանան ձեզ տանի . . .

— Բանվորները շղթայի պես շրջապատեցին, չեր կարելի ճեղքել :

— Շղթայի՞ պես շրջապատեցին :

Գնդապետի աչքերը նեղացան : Նա քայլեց առաջ և սեղմած բոռնցքը մոտեցրեց խուճուճավորի յերեսին :

— Ես ձեզ այնպիսի շղթա ցույց կտամ, սրի՛կաներ . . .

Նա բռնել եր իր համազգեստի ոճիքից . կատաղությունը խեղդում եր նրան : Մի բոպես սպասելուց հետո՝ խռպոտ ձայնով հարցրեց .

— Իսկ կամոն ու կոտեն :

— Նրանք թիֆլիսում չեն :

— Ո՞ւր են նրանք :

— Նրանք . . . գնացել են Վալաղիկավկազ :

— Խաբում եք բոլորդ, չներ . . .

Յեվ գնդապետը հանկարծ կուցավ ու փսխաց՝ մաւեգին զայրույթից թուք թափելով .

— Արհեստանոցներում բայլշեհիկներին լիկվիդացիայի յենթարկելու համար ձեղ մի շաբաթ ժամանակ եմ տալիս . . . Մի շաբաթ . . . Շաբաթ . . . Հասկացա՞ք . . . Հասկացա՞ք . . .

Յեվ յուրաքանչյուր խոսքի հետ նա խփում եր խուճուճավորի կրծքին, իսկ սա թեքվում եր դեպի յետ :

— Դուրս կորիր :

Խուճուճավորը ուսմբի պես դուրս թռավ առանձնասենյակից՝ քթի տակ հայհոյանքներ մըթմըթալով :

Առ սկսվեց «աշխատանքը» փողոցներում : Փոքրիկ լրտեսները, մեծ լրտեսները, պատկառելի և զաղընիլի լրտեսները լավ և աղքատ հազնված՝ բոլորը վիստում եյին անցորդների մեջ, նայում ամեն ուր, ականջ զնում, հսկում խանութների մոտ մայթերի վրա, թագնվում դարպաններում :

Կամոն գրիմ արած, մորուքով և բեխերով, տեփուրը գլխին դրած անցնում եր այդ անցորդների և լրտեսների մոտից և իրեն զգում, ինչպես ձուկը ջրում : Նա ամենաչնչին հուզմունք անդամ չեր զգում այդ վտանգավոր քայլից՝ կամոն սովոր եր դրան : Նրա գեմքը հանդիսաւ եր, յերբեմն նա ժպտում եր և ատամները փայլում եյին արևի տակ : Մերթ ընդ մերթ նա ձիգ ու ծույլ կերպով գովում եր իր ապրանքը :

Բայց պատահում եյին վայրկյաններ, յերբ նրա հույլ աչքերը հանկարծ սրվում եյին, ինչպես գիշատիչ թռչունի աչքերը, նա հայացքն արագաբար այս ու այն կողմ եր դարձնում, կիսախուսի եր անում կոպերը և աչքերը նորից մարում եյին :

Կամոն գնում եր դեպի լաբորատորիա, ուր պայթուցիկ նյութեր և ռումբեր եյին պատրաստում : Ամենապաղտնի տեղն եր այդ, վորի նկատմամբ շատ խիստ կոնսպիրացիա յեր սահմանված : Պետք եր գնալ մեծ նախազգուշություններով, սակայն այն մարդը, վորին յերկար տարիներ շարունակ հետապնդում են, զգայուն գազան և գառնում : Նրա աչքերը խալարի մեջ ել են տեսնում և ականջները լսում են փոքրիկ շրջունը . ամենաչնչին դիտողություններն անդամ տպավորվում են նրա մեջ, ինչպես լուսանկարչական պլաստինկայի վրա : Կամոյի համար նախազգուշություններն ու գաղտնա-

պահությունը վաղուց արդեն պահանջ և սովորություններ:

Այդպես նա անցավ ամբողջ քաղաքը, մինչև սոր արվարձանը, ուր փոքրիկ փողոցում բացեց մի մութ, աղքատիկ մրգի կրպակի դուռը: Կրպակում միայնակ մի ծերունի յեր նստել:

— Եսե՞ւ:

— Եսե՞ւ:

Այսուհետեւ կամոն մտավ բակը և ուղղվեց դեպի հին, մամուսպատ տանիքով սարայը: Սարայի յերկարությամբ ձգված եյին թոկեր, վորոնց վրա թաց սպիտակեղեն եր փոված: Պառավ լվացարարուհին, կնճռու կորաքամակ ինչ վոր շաթեր եր մզում տաշտակում:

Նա նայեց կամոյին:

— Եսե՞ւ:

— Եսե՞ւ:

Կամոն անցավ սարայի անկյունը, ուր գրված էյին գինու բազմաթիվ դատարկ տակառներ: Նա իրարից հեռացրեց այդ տակառները և նրանց տակ դեպի տակն անցնելու մի անցք բացվեց: Նա սկզբուն աստիճաններով ցած իջավ:

Դա կրկին մի փոքրիկ գետնափոր եր: Գուցե մի ժամանակ դա գինու նկուլ եր յեղել, վոր հետո փուլ եր յեկել:

Այդտեղ մրագի աղոտ լույսի տակ, սեղանի առջե, վոր ծածկված եր քիմիական պարագաներով և զանազան բանկաներով, աշխատում եր սև ակնոցներով, անքնությունից աչքերը կարմրած և ծաղկատար մի մարդ, վորի գեմքի մկանները ցնցվում եյին:

Նա գլուխը բարձրացրեց և նայեց կամոյին:

— Ծանր ե, սիրելիս:

— Ի՞նչն ե ծանր:

— Աշխատանքը: Զկան վոչ նյութեր, վոչ ամանեւր, վոչ ձեւանարկ: Այսպիս յես դեռ յերկար պիտի աշխատեմ, մինչև վոր գուք ինձանից մի վորեւ բան կստանաք: Իսկ յես վախենում եմ ուշանալ:

Կամոն բանկաները մի կողմը քաշելով, հոգնած նստեց սեղանի ծայրին:

— Ի՞նչ կարելի յե անել, ընկեր ջան: Փող չկա, հարկավոր կապեր չկան: Այդ ճիշտ ե, վոր այդպես աշխատել չի լինի:

— Նո՞ւ, իսկ հետո:

Կամոն հանկարծ ցնցվեց, վեր կացավ, միքանի առածկական քայլեր արավ դեպի յետ ու առաջ: Նրա աչքերը սրվեցին:

— Փող կլինի:

— Վո՞րեկղից: Կենտկոմի՞ց:

— Կենտկոմը փող չունի:

— Հապա վո՞րեկղից:

— Յես այդ մասին մտածում եմ: Փող կլինի: Մոռուրես յես առաջարկ կմացնեմ:

Ծաղկատար գեմքով ընկերը նայեց կամոյին, շարժեց ըրթոնքները, ցանկանալով ինչ վոր բան ասել, բայց հետո սեղեց նորից:

— Թող այդպես լինի: Յես կսպասեմ: Յես ձեղ ասացի, թէ ինչպիս ե գրությունը:

— Իսկ ի՞նչ է շինված մինչև հիմա:

— Յերկու ոռումք: Յեմ կարող վասահանալ դրանց վրա: Պետք ե փորձել:

— Ի՞նչ կա վոր: Կփորձենք:

— ՅԵՐԱԲ:

— Այսոր յե՞ս կուղարկեմ զլաս հետևեց: Կասես ընկերներին ինչպես վարվել հետը:

— Յես կհրահանդեմ:

Յեվ մենակ մնալով՝ ծաղկատար ընկերը կրկին խորասուղվեց յի լոելյայն, վտանգավոր, ամենքից անտես աշխատանքի մեջ:

Կամոյի հոր տանն ընթանում եր սովորական կյանքը:

Ծերունի Արշակը կապալառու յեր: Նրա մոտ շարունակ մարդիկ եյին լինում, գնում եյին ու գալիս. մշտապես լսվում եյին տաք վիճաբանություններ—փո՛ղ, փո՛ղ, փո՛ղ...

Յերեմին Արշակը հյուրեր եր ընդունում, նույնպիսի ուներդների, ինչպիսին ինքն եր: Այդ ժամանակ նրա տունը տակն ու վրա յեր լինում: Դուրս եր բերվում թանգարժեք ամենեղենը, փոլում եյին գույնդըույն դու դեր, յերեան եյին գալիս հին գինիները: Այսպիսի ընդունելություններին Արշակը չեր ժլատանում. նա սիրում եր ցույց տալ իր հարստությունը:

Սակայն չքալորների հանդեպ Արշակը խիստ ու ժլատ եր. չքալորները վատ մարդիկ եյին, նրանց վրա չալ ժի անգամ թքել: «Զես աշխատի—չես ուտի: Հասկանո՞ւմ ես»:

Կամոյի մայրը՝ Մարոն ամուսնուց թագում ողնում եր աղքատ հարեաններին և կերակրով, և իրերով, թե փողով: Բայց խստասիրտ ամուսնու ոուր հայացքի ներքո այդ ողնությունը մեծ չեր:

Կամոն, յերեմինի կայտառ ու չարաձճի այդ տղան,

թաղի փոքրիկ կտրիճների ղեկավարը, ուաքարյուն, ինչպես կրակ, խիղախ, ինչպես առյուծ, և արդարասեր, ինչպես ջինջ յերկինքը, —կամոն սիրելի ու պաշտելի յեր Մարոյի ու նրա Զավահիր աղջկա համար: Հաճախ, շատ հաճախ մայրն ու քուրը կամոյին փրկում ու թագնում եյին հոր զայրութիւց:

Մեծաշավ կամոն, և միքանի տարի վոչ Մարոն, վոչ ել Զավահիրը չգիտեյին, թե ո՞ւր ե նա, ի՞նչ ե անում և կենդանիօ յե արդյոք: Գիտեյին միայն մի բան. յեթե կենդանի յե կամոն, ապա նրա բոցավառ ու աղնիվ սիրութը վտանգավոր ու դժվար ուղիներով ե առաջնորդում նրան: Շատ անդամ յերկար ու լուռ գիշերներին, յերբ Արշակը տանը չեր լինում, մայրն ու քույրը վախվելով խոսում եյին կամոյի մասին, թե յերբ են տեսնելու, և տեսնելո՞ւ յեն արդյոք: Ու տիրագին հառաջում եյին:

Այդ որը Զավահիրն ուշացել եր ճաշին:

Մարոն ու Արշակընստել եյին իրար դիմաց և լոելյայն ուտում եյին: Լուսությունը խանդարում եր մեծ կապույտ ճանճը, վոր համառությամբ զարկվում եր պատուհանի ապակուն:

— Ինչո՞ւ քիչ ես ուտում:

— Ուտում եմ:

— Պետք ե շատ ուտել: Լավ մարդը շատ ե ուտում:

— Յես ուտում եմ:

Նորից լուսություն:

Այդ միջոցին ներս ընկավ Զավահիրը: Նրա աչքերը փայլում եյին և մաղերի փնջերը ցրվել եյին ճակատի վրա. կուրծքն արագ եր չնչում: Նա կանգ առավ սեղանի մոտ:



— ՅԵՐԵՎԱՆ :

— Այսոր յե՞ս կուղարկեմ դբա հետեւից : Կառես ըն-  
կերներին ինչպես վարվել հետը :

— Յես կը հաջանդեմ :

Յեվ մենակ մնալով՝ ծաղկատար ընկերը կրկին խո-  
րասուղվեց իր լուելյայն, վտանգավոր, ամենքից անտես  
աշխատանքի մեջ :

Կամոյի հոր տանն ընթանում եր սովորական կյան-  
քը :

Ծերունի Արշակը կապալառու յեր : Նրա մոտ շարու-  
նակ մարդիկ եյին լինում, գնում եյին ու դալիս . մշտա-  
պէս լովում եյին տաք վիճաբանություններ—փո՛ղ,  
փո՛ղ, փո՛ղ . . .

Յերբեմն Արշակը հյուրեր եր ընդունում, նույնպի-  
սի ունելորների, ինչպիսին ինքն եր : Այդ ժամանակ նրա  
տունը տակն ու վրա յեր լինում : Դուրս եր բերվում  
թանգարժեք ամենեղենը, փովում եյին գույնդույն  
դու դեր, յերեան եյին դալիս հին դինիները : Այդպիսի  
ընդունելություններին Արշակը չեր ժլատանում . նա սի-  
րու մ եր ցույց տալ իր հարստությունը :

Սակայն չքավորների հանդեպ Արշակը խիստ ու  
ժլատ եր . չքավորները վատ մարդիկ եյին, նրանց վրա  
չալ ժի անդամ թքել : «Զես աշխատի—չես ուտի : Հաս-  
կանո՞ւմ ես» :

Կամոյի մայրը՝ Մարոն ամուսնուց թագուն ոգնում  
եր սղքատ հարեաններին և կերակրով, և իրերով, թե  
փողով : Բայց խստասիրտ ամուսնու սուր հայացքի ներ-  
քո այդ ոգնությունը մեծ չեր :

Կամոն, յերեմնի կայտառ ու չարաձճի այդ տղան,

թաղի փոքրիկ կտրիճների զեկավարը, առաքարյուն,  
ինչպես կրակ, խիղախ, ինչպես առյօն, և արդարասեր,  
ինչպես ջինջ յերկինքը, — կամոն սիրելի ու պաշտելի յեր  
Մարոյի ու նրա Զավահիր աղջկա համար : Հաճախ, շատ  
հաճախ մայրն ու քուրը կամոյին փրկում ու թագնում  
եյին հոր զայրույթից :

Մեծաշավ կամոն, և միքանի տարի վոչ Մարոն, վոչ  
ել Զավահիրը չգիտեյին, թե ո՞ւր ե նա, ի՞նչ ե անում  
և կենդանի՝ յե արդյոք : Գիտեյին միայն մի բան . յեթե  
կենդանի յե կամոն, ապա նրա բոցավառ ու աղնիվ սիր-  
տը վտանգավոր ու դժվար ուղիներով ե առաջնորդում  
նրան : Շատ անդամ յերկար ու լուռ գիշերներին, յերբ  
Արշակը տանը չըր լինում, մայրն ու քույրը վախվսելով  
խոսում եյին կամոյի մասին, թե յերբ են տեսնելու,  
և տեսնելու յեն արդյոք : Ու տիրագին հառաջում եյին :

Այդ որը Զավահիրն ուշացել եր ճաշին :

Մարոն ու Արշակը նստել եյին իրար դիմաց և լուել-  
յայն ուտում եյին : Լուությունը խանդարում եր մեծ  
կապույտ ճանճը, վոր համառությամբ զարկվում եր  
պատուհանի ապակուն :

— Ինչո՞ւ քիչ ես ուտում :

— Ուտում եմ :

— Պետք ե շատ ուտել : Լավ մարդը շատ ե ուտում :

— Յես ուտում եմ :

Նորից լուություն :

Այդ միջոցին ներս ընկալ Զավահիրը : Նրա աչքերը  
փայլում եյին և մաղերի փնջերը ցրվել եյին ճակատի  
վրա . կուրծքն արագ եր չնչում : Նա կանգ առավ սեղանի  
մոտ :



— Կամոն . . . Մեր Սենկոն այստեղ և :  
 Մարոն վեր թռավ ու բռնեց նրա ձեռքերից :  
 — Ո՞վ ասաց , ո՞վ ասաց :  
 — Պաշիա Գալգավան :  
 Արշակը խոժոռավեց վճռական ու բարկացած :  
 — Զեմ ուզում նրան տեսնել :  
 Զավահիրը վշտից բռունցքներն եր սեղմում :  
 — Իսկ ինչո՞ւ , ինչո՞ւ :  
 Արշակը կուկ ավեց վոչխարի մսից պատրաստված  
 փլավի պատառը և պատասխանեց դանդաղ ու հաս-  
 հաս .  
 — Զեմ ուզում այդպիսի վորդի : Վատ մարդկանց  
 հետ և ընկել : Իմ ինչի՞ն և պետք այդպիսի վորդին : Ինձ  
 համար նրա պես տղան—խաղք ու խայտառակություն և :  
 Զավահիրը նետվեց հոր մոտ .  
 — Հայր , յես ուզում եմ տեսնել Սենկոյին :  
 — Դու չես տեսնի Սենկոյին :  
 Զավահիրի աչքերը բոցավառվեցին :  
 — Յես կուսնեմ , հա՛յր :  
 — Վոչ :

Արշակը բռնցքով այնպես խիեց սեղանին , վոր ա-  
 մանները զբնդացին :

Պառավ Մարոն դրկեց Զավահիրին և հեռացրեց  
 նրան սեղանի մոտից :

— Լոի՛ր , լոի՛ր , յերբ հայրու խոսում ե :

Ու չենջաց նրա ականջին .  
 — Հետո ինքդ կդնաս . . . կդնաս . . .

Յեվ նրան դուրս հրեց սենյակից :

Կամոն ու կոտեն , ըստ սովորականի , գուշաբար չորս

կողմ նայելով՝ գնում ելին շրջաններից յեկած հեղափո-  
 խականներին տեսնելու : Անհրաժեշտ եր քննել ստեղծ-  
 ված հանդամանքները և մոտիկ ապագայի միջոցները :  
 Դամոն ու կոտեն արագորեն ծլկվեցին մի փոքրիկ  
 պանդոկի գոնից ներս : Պանդոկը դատարկ եր : Միայն  
 ծեր , այլեզարդ , կախ ընկած բեխերով մի վրացի նստել  
 եր սեղանի առջև և ննջում եր՝ գինու բաժակը թողած :  
 Սակայն հետեւ սենյակից լսվում եր հանդարտ ու զուապ  
 խոսակցություն :

Եերբ Կամոն ու կոտեն ներս մտան այնտեղ , նրանց  
 գիմավորեցին ուրախ բացականչությամբ և ձեռքի ա-  
 մուր սեղմումով : Հուսով և անհամբերությամբ սպա-  
 սում եյին նրանց և վախենում եյին , թե վորեւ բան  
 չխանդարի գալուն :

Այդտեղ նստել ելին շատ լեռնցի հեղափոխականներ ,  
 փափախով , պատառուտուն ազգային տարազով , ջղուն և  
 նիշար : Նրանց մեջ կար մի կին ջահել , բարեկազմ ,  
 ու փայլուն աչքերով :

Առաջինը խոսել սկսեց մի վրացի , վորի ճակատը  
 ձղված եր թրի հարվածից և սոլին չեղ չերտով տարած-  
 վում եր հոնքից սկսած մինչև մազերը :

— Ընկեր Կա՛մո , մեր վիճակը ծանրանում է : Մենք  
 թողինք տուն , տեղ ու լեռները քաշվեցինք : Ընտանիք-  
 ներս սոված են , ինքդ գիտես—կողոպտել մենք չենք կտ-  
 րող : Ինչո՞վ ապրենք , ընկե՛ր : Տուն վերադառնալու  
 հնար չկա :

Վրացուց հետո խոսեց յերկրորդը , յերրորդը :  
 — Զենք չկա , հեղափոխություն չկա : Սիրելի ըն-  
 կեր , սարերում շատ մարդ կապստամբվիր , բայց ինչով

ապստամբվեն : Դու մեղ խոստացար , քո խոսքն հաստատե : Դեհ , յե՞րբ : Ասա՛ , — յե՞րբ :

Լեռներից յեկած կինն ել ավելացրեց .

— Մեր կանայք գնացին վողորմություն ինդրելու , յերեխաներին հարեաները խղճալով իրենց մոտ վերցրին : Ամեն տեղ լաց ու արտասուզ ե , չքավորություն : Կանայք ինձ քեզ մոտ են ուղարկել : Յե՞րբ ե լինելու , ընկեր կամո :

Կամոն ուշադիր դիտում եր բոլորին , և նրա աչքերը թախծոտ ելին :

Յերբ բոլորը խոսեցին պրծան , նա սպասեց մի բուպե , կարծես հավաքելով իր մտքերը :

— Թանդաղին ընկերներ , պետք ե սպասել : Փող կլինի , զենքեր կլինեն : Բայց խնդիրը միմիայն փողն ու զենքը չի , այլ կաղմակեալությունն ե , ընկերներ : Կատարե՞լ եք դուք այդ մեծ աշխատանքը : Վո՞րտեղից զիտեք , թե մարդեկ կդան ձեր հետեւից : Արդյոք դուք մի բուռը մարդիկ չե՞ք՝ անզոր մի բան անելու :

Այդտեղ աղմուկ բարձրացավ , բոլորը միանդամից սկսեցին խսել :

— Վոչ , նանք մի բուռը չեն : Նրանց հետեւից կդան մարդիկ : Վոչ , վոչ , կաղմակերպության գործը լավ ե գնում : Իրենք պատրաստ են , այո :

Նրանք զննում եյին իրար , և նրանց աչքերը հուգված փայլում ելին :

— Ընկեր կամո , գալիս են ժանդարմները , վոստիկանները , անդամություն են անում , բռնաբարում , սպանում : Համբերություն չկա :

— Ընկեր կամո , տերը որի դեմ տերոր : Զենք տուր , գնանք քեզ հետ :

Լեռներից յեկած կինը մոտեցավ կամոյին :

— Ընկեր կամո , յես բայլշեիկ եմ : Հանձնարարի՞ր ինձ մի գործ :

Յեվ նա աղերսանքով նայում եր կամոյին :

— Լավ , լավ , քո միջոցով կապ կպահպաննք : Ի՞նչպես ե քո անունը :

— Վարսենիկ :

Կամոն վեր կացավ :

— Ընկերներ , մեղ յերկար նստել չի կարելի , պետք յրվել : Յերեք որից հետո յես խոստանում եմ սլատասխան տալ , թե յերբ փող կունենանք զենքի համար : Ցրվեցեք : Ողող ձեղնից միքանիսը խիստ հարբած ձևանան , մյոււները՝ ուրախ : Զթաղնվե՞ք :

Յերբ կամոն պանդոկից դուրս յեկավ , դրառմ պտուվում եր մի լրտես : Սակայ նա վոչ մի ուշադրություն չղարձրեց կամոյի վրա , վոր անցնում եր կինտոյի շորով , տեփուրը զվխին դրած :

Լրտեսն ընկավ լեռնցիների մի խմբի յետեւից , բայց համողվելով , վոր նրանք հարբած են , հուսակտուր թողեց հետապնդելը :

Զավաճիրը նստել եր ընկերուհու մոտ և անհամբեր դեպի պատուհանն եր նայում : Նա իր յեղբորն եր սպասում կամոյին , վորին նախընթաց որը գրություն եր ուղարկել : Ստացա՞վ , թե՞ չե : Կզա՞ , թե՞ վոչ :

Նա հեռանում եր պատուհանից , նորից մոտենում , անհամբերությամբ քայլում եր սենյակի մի անկյունից մյոււսը , կանգ առնում , նորից քայլում , նորից նայում դեպի լուսամուտը :

Յեվ այն բոպեյին , յերբ նա սկսել եր արդեն հուսա-

Համվել ու Ել չեր նայում պատուհանին, կամացուկ ու  
աննկատ ներս մտավ Կամոն:

Այս, նա նրա քույրն եր, նրա սիրելի քույրը, վորին  
կամոն միքանի տարի յե չի տեսել: Նա դուավ նրան,—  
նշանակում ե սիրում ե առաջիւ պես: Նրա սիրուը քըն-  
քըզությամբ լցվեց:

Զավահիրն առաջին վարկանին չնակատեց կամոյին,  
իսկ հետո տեսավ, ճշաց և փարվեց նրա վզով:

— Սենկո, Սենկո, դու վաղո՞ւց ես թիֆլիսում: Յեզ  
դու իմաց չեյիր տալիս ինձ: Յես քեզ սիրում եմ, Սենկո:

— Սիրելիս, իմ անգին: Յես քեզ չեյիր տեղեկացնուած  
նրա համար, վոր գիտեյի, թե ինչպես ե վերաբերվում  
հայրս դեպի ինձ: Բացի դրանից՝ այդ վտանգավոր ե,  
քանի վոր ինձ վորսալ են ուղում թիֆլիսում: Յեզ հետո  
նրա համար, վոր յես պատրաստվում եմ մի մեծ գործի,  
Զավահիր:

— Ի՞նչ գործ.

— Դու գիտե՞ս, վոր յես հեղափոխական եմ, Զա-  
վահիր: Ինձ վրա մեծ պարտականություն ե դրված:

— Դե լավ, չեմ հարցնի: Բայց չիշիր, Սենկո, վոր  
միշտ, ամեն պարագաներում յես կանեմ քեզ համար այն  
ամենը, ինչ վոր դու ցանկանաս, և վոչ միայն քեզ հա-  
մար, այլ և քո հեղափոխության համար: Դու հիշելո՞ւ  
յես, Սենկո:

— Յես կհշեմ:

Յեզ նրանք զեռ յերկար նստած եյին իրար կողքի՝  
մտարերելով անցյալը և մատծելով ահամոր ապագայի  
մասին:

Այդ որը շատ նշանակալից եր կամոյի համար: Այդ  
որը կայանալու յեր բայլէնիկների թիֆլիսի կոմիտեյի

լայն ժողովը, վորտեղ կամոն պատրաստվում եր գնելու  
մի շարք հարցեր: Դրանց լուծումից, եր կարծիքով,  
կախված եր հեղափոխության բախտը վոչ միայն Կով-  
կասովամ, այլև մասամբ նույնիսկ ամբողջ Ռուսաստա-  
նում:

Կամոն այդ առթիվ ուներ իր ծրագրները, վոր նա  
խնամքով կազմել եր և վորոնց հաջողությանը հավա-  
տում եր: Սակայն նա կուսակցության դիսցիլինային  
բավականաչափ յենթարկվող անդամ եր, վորպեսզի  
առանց այլևայլի հպատակվի կուսակցական կոմիտեի  
վորոշմանը, թեկուզ ինչպիսին ել դա լինի: Ուստի նա  
դողում եր այդ վորոշմանն սպասելիս՝ նախազգալով  
այն ահագին վիշտն ու հիսաթափությունը, վոր նա  
կկրեր; յեթե նրա ծրագրները մերժվեյին:

Նիստն սկսվեց յերեկոյան, վրացի մի իշխանի տա-  
նը: Յերիտասարդ իշխանը թեպետ ինքը կուսակցական  
չեր, բայց համակրում եր հեղափոխությանը և աշխա-  
տում եր ծառայություններ մատուցել հեղափոխական-  
ներին:

Բայցի կոմիտեյի կազմից, Հավաքվել եյին նաև  
տասնհինգ առանձնապես պատասխանատու մարտիկ բն-  
կերներ:

Զեկուցումով հանդես յեկավ Կամոն: Նա խոսում եր  
հանդարտ, բայց կրքոտ ձայնով, վոր յերբեմն լավում  
եր շնչյունի նման: Նա, շարունակ հանգիստ ու գուազ  
այդ մարդը, հուզվում եր: Իր խոսքի սկզբում, յերբ նա  
ձեռներով հենվել եր աթոռին, նրա մատները դողում  
ելին:

— Ընկերներ, հեղափոխության գործը, զինված  
տպատամբություն նախապատրաստելու գործը, վորին

մեք ձգտում ենք, մեռած կետի վրայ յեւ ինչո՞ւ : Վորով-  
հետև մենք աղքատ ենք, վորովհետև մենք անկարող ենք  
դրականություն հրատարակելու վոչ այստեղ, վոչ եւ  
արտասահմանից բերելու, վորովհետև մենք վոչ մի  
կերպ չենք կարողանում կապերը վերահաստատել, վո-  
րովհետև մեր աշխատավորները քաղցած են . . . Նրա հա-  
մար ե ամեն բան մեռած կետի վրա կանգնած, վորովհե-  
տև մենք զենք չունենք . . . Զենք չկա : Դուք հասկանո՞ւմ  
եք, թե ինչ ե նշանակում այդ, — մարտիկը զենք չունի :  
Կնշանակի՞ նա չունի վուճեր, չունի ձեռքեր, չունի  
դլուխ, կնշանակի նա դիակ ե : Ընկերներ, զենքը պետք  
ելինի և մենք ձեռք կբերենք :

## ՄԵԼԸ ՆՐԱՆ ՀԱՐԴՐԵց .

— Ἡρακλεος:

Կամոն ձեռքը բւռնցք կաղմած՝ գլխից վեր բարձրացրեց :

— Եքսպրոպրիացիա: Մենք եքսպրոպրացիա կանենք, յստ հանձն եմ առնում կատարել այդ:

Անասելի աղմուկ բարձրացավ :

Ժողովին նախադահը սկսեց հանդսդուացնել .

— Ընկերներ, կամաց, հանդա՛րտ . . . թողէք վերջացնի . . .

Բայց կամոն ձեռքով թափահարեց :

— Թող խոսեն, լես հետո կասեմ :

Սկսվեցին կրթութ վիճաբանություններ :

— Կամո, մենք քեզ հետ համաձայնել չենք կարող ե եքսպրոպրացիա անել չենք թույլ տա: Այդ ի՞նչ ես քարողում մեղ, սիրելի բայլշենիկ: Փոխանակ այն բանի, վոր ուժեր հասցնեն բանվորների և գյուղացիների մաս-սայական հեղափոխական յելույթի կազմակերպման:

գործին, դու մեղ առաջարկում ես վատնել ուժերն անհատների հերոսական յելույթների համար։ Դու մեղ առաջարկում ես կորվել մասսաներից, բարոյալքել նրանց։ Արդյոք դիտե՞մ, թե ինչ ես առաջարկում։ Դու վոչ թե բայլեկիզմ, այլ անարխիզմ ես հրամցնում, դու առաջարկում ես բանկիզմ . . . Կա՛մո, Կա՛մո, հրաժարվեր շուտով այն ամենից, ինչ վոր ասում ես :

Համբերատար նստել եր կամոն վիճաքանության  
խաչաձև կրակի տակ և լսում եր՝ գլուխը ձեռքերին հե-  
նած : Նա չեր ջանում դիսկուսիայի ընթացքին միջամտե-  
լու և միայն այն ժամանակ, յերբ ամենքը բալականա-  
շափ հողնեցին, նա վերջապես վեր յելավ, վոր պա-  
տասխանի :

Այժմ նրա հողմունքը ծայր աստիճանի յեր հասնէ:

— Յես—անարդի՞ստ : Յես բլանկի՞ստ . Ռոկ Դուք  
ում եք ինչպես մենշևիկ, դուք խոսում եք ինչ-  
այն մարդիկ, վոր չգիտեն, թե ինչ բան ե պայ-  
ցը : Ի՞նչ ե գրել Լենինը մեր բայլշևիկյան պարտիզա-  
թյան մասին : Նա գրել է . «Պետք ե ջախճախել կա-  
լարչական մեքենան, պոլիցիական մեքենան, ուսղմա-  
մեքենան, պետք ե կռվել ակտիվ ու հարյուրակայ-  
թյան դեմ, ազգաբնակչությունն ահաբեկելու դեմ . . .»  
ասում եր . «Տերորին տերորով պիտի պատաս-  
սել » : Դուք այդ մոռացե՞լ եք : Այո, ընկերներ, նա-  
ց այդ ե ասել, վոր պետք ե գրավել պետական փո-  
լը, ապստամբության կարիքների համար : Դուք այդ  
ք մոռացել : Դուք գոռում եք ինձ բլանկի՞ստ, տեր-  
ի՞ստ, իսկ չգիտեք՝ ինչպես են վարդում իսկական  
լւեկիները, յերբ նրանց նեղն են դցում, — նրանք  
դրի պես են վարդում, նրանք հարձակվում են դեպի

Տեք ձդտում ենք, մեռած կետի վրա յե : Ինչո՞ւ : Վորով-  
հետև մենք աղքատ ենք, վորովհետև մենք անկարող ենք  
դրականություն հրատարակելու վոչ այստեղ, վոչ ել  
արտասահմանից բերելու, վորովհետև մենք վոչ մի  
կերպ չենք կարողանում կապերը վերահաստատել, վո-  
րովհետև մեր աշխատավորները քաղցած են...Նրա հա-  
մար ե ամեն բան մեռած կետի վրա կանգնած, վորովհե-  
տև մենք դենք չունենք...Զենք չկա : Դուք հասկանո՞ւմ  
եք, թե ինչ ե նշանակում այդ, —մարտիկը զենք չունի :  
Կնշանակի՝ նա չունի վոտքեր, չունի ձեռքեր, չունի  
դլուխ, կնշանակի նա դիակ ե : Ընկերներ, զենքը պետք  
ե լինի և մենք ձեռք կբերենք :

Մեկը նրան հարցրեց .

— Ի՞նչպես :

Կամոն ձեռքը բուռնցք կազմած՝ գլխից վեր բարձ-  
րացրեց :

— Եքսպրոպրիացիա : Մենք եքսպրոպրացիա կա-  
նենք, յես հանձն եմ առնում կատարել ալդ :

Անասելի աղմուկ բարձրացավ :

Ժողովի նախադահը սկսեց հանդսդացնել .

— Ընկերներ, կամաց, հանդա՛րտ...Թողեք վեր-  
ջացնի...

Բայց կամոն ձեռքով թափահարեց :

— Թող խոսեն, յես հետո կասեմ :

Սկսվեցին կրօտ վիճաբանություններ :

— Կամո, մենք քեզ հետ համաձայել չենք կարող  
և եքսպրոպրացիա անել չենք թույլ տա : Այդ ի՞նչ ես  
քարողում մեղ, սիրելի բայլչեկիկ : Փոխանակ այն բանի,  
վոր ուժեր հասցնես բանվորների և գյուղացիների մաս-  
սայական հեղափոխական յելութի կազմակերպման

դործին, դու մեղ առաջարկում ես վատնել ուժերն ան-  
հատների հերոսական յելությների համար : Դու մեղ ա-  
ռաջարկում ես կտրվել մասսաներից, թարոյալքել  
նրանց : Արդյոք դիտե՞մ, թե ինչ ես առաջարկում : Դու  
վոչ թե բայլչեկիզմ, այլ անարխիզմ ես հրամցնում, գու  
առաջարկում ես բլանկիզմ...Կամո, Կամո, հրաժար-  
վեր չուտով այն ամենից, ինչ վոր ասում ես :

Համբերատար նստել եր կամոն վլճարանության  
խաչաձև կրակի տակ և լսում եր՝ գլուխը ձեռքերին հե-  
նած : Նա չեր ջանում դիմկուտիայի ընթացքին միջամտե-  
լու և միայն այն ժամանակ, յերբ ամենքը բավականա-  
շափ հոգնեցին, նա վերջապես վեր յելավ, վոր պա-  
տասխանի :

Այժմ նրա հուզմունքը ծայր աստիճանի յեր հասել :

— Յես—անարխիստ : Յես բլանկիստ . Իսկ դուք  
ինսում եք ինչպես մենշվարիկ, դուք ինսում եք ինչ-  
պես այն մարդիկ, վոր չգիտեն, թե ինչ բան ե պայ-  
քարը : Ի՞նչ ե գրել լենինը մեր բայլչեկիյան պարտիզա-  
նության մասին : Նա դրել ե . «Պետք ե ջախչախել կա-  
ռավարչական մեքենան, պոլիցիական մեքենան, ռազմա-  
կան մեքենան, պետք ե կովել ակտիվ և հարյուրակայ-  
նության դեմ, աղդաբնակչությունն ահաբեկելու դեմ . . .»  
Նա ասում եր . «Տերորին տերորով պիտի պատաս-  
խան ինձնել » : Դուք այդ մոռացե՞լ եք : Այո, ընկերներ, նա  
հենց այդ և ասել, վոր պետք ե գրավել պետական վո-  
ղերը, ապատամբության կարիքների համար : Դուք այդ  
եք մոռացել : Դուք գոռում եք ինձ բլանկիստ, տեր-  
որիստ, իսկ չգիտեք՝ ինչպես են վարվում իսկական  
բայլչեկիները, յերբ նրանց նեղն են գցում, — նրանք  
գաղրի պես են վարվում, նրանք հարձակվում են դեպի

կուրծքը . . . Մեզ ևս նեղն են դցել և մենք չարձակվում ենք կրծքի վրա : Յեվ թող վորեւ մեկը կասեցնի մեր թափը : Դուք ինձ խոսքերով մի վախեցնեք : Յես չեմ վախենում : Ելի յեմ կրկնում—տվեք ինձ եքսպրոպրիացիայի թույլ-տվություն, յես կազմակերպեմ և կիրագործեմ :

Ինչպես խարույկն ե բոցավառվում, յերբ ցախի նոր խուրձ ես նետում մեջը, այնպես ել վիճարանությունը տաքացավ նոր կրակով : Սակայն դա արդեն այլ վիճա-րանություն եր : Հիշատակումը ղեկավարի հրահանդ-հողվածի մասին, վորը նախատեսում եր եքսպրոպրիա-ցիայի հնարավորությունը, կուսակցության նյութական վիճակի անելանիությունը, կազմակերպվող մասսայա-կան շարժման անհետաձելի կարիքները, գաղտնի աշ-խատանքի անցած հեղափոխականների քաղցած դրու-թյունը—այդ բոլորն այն յեղակացության հանդան, վոր հոգուու կամոյի առաջարկի ավելի ու ավելի շատ ընկերներ եյին արտահայտվում :

Յեվ վերջապես առաջարկն անցավ :

Վորոշված եր կուսակցության ուժերով և նրա մոտ վերահսկողությամբ ու ղեկավարությամբ կազմակեր-պել կառավարական միջոցների խոչըր եքսպրոպրիացիա անել հեղափոխական աշրժման կարիքների համար և այդ ամբողջ գործի կազմակերպությունը հանձնարարել կա-մոյին :

2.

Այդ որվանից տեսնդային գործունեյություն սկսվեց : Հարկավոր եր զենքեր և ոռոմքեր պատրաստել, ապահո-վել կոնսոլիրատիվ բնակարանները, փոխադրության միջոցները, ժարդիկ ընտրել, նրանց մեջ բաժանել պար-

տականությունները, հետեւ փողի գումարների շարժ-մանը պետական հիմնարկությունների մեջ :

Առանձնապես դժվար ե վերջին ինդիքը : Պետական այդ հիմնարկություններում կուսակցական կապեր չկա-յին, այսուղից վորեւ տեղեկություն ձեռք բերելն ան-կարելի յեր :

Բանկերի, գանձարանի և փոստի վրա սահմանեցին արտաքին հսկողություն : Վճռված եր փողերն եքսպրո-պրիացիայի յենթարկել այն վայրկյանին, յերբ գումա-րը տեղափոխելու լինեն մի հիմնարկից մյուտը : Ուստի վրսի հսկողությունն անոգուտ եր . դա կամ վոչ մի տե-ղեկություն չեր տա, կամ յեթե հայոնի դառնար փողի փոխադրության մասին, այդ հանդամանքից ոգտվել, միենույն ե, ուշ կլիներ :

Եքսպրոպրիացիան իրականացնելու աշխատանքը փակուղու յեր գեմ առել :

Կամոն հուսահատության մեջ եր :

Բարեբախտաբար նրա ընկերներից մեկը հիշեց, վոր ինքը փոստում մի չինովնիկ ծանոթ ունի՝ առավել կամ պակաս չափով հեղափոխականորեն արամադրված : Ի հարկե, խոսք անդամ չեր կարող լինել այդ մասին, վոր նրան հայտնեյին գործի եյությունը : Հապա այդ դեպ-քում ի՞նչ պատրիվակով պիտի նրանից դուրս քաշել հարկ յեղած տեղեկություննելը :

Վճռված եր յերեկոյթի նման մի բան սարքել, կեր ու խումն ել հետը, կանչել այդտեղ չինովնիկին, և գի-նու բաժակի վրա, ընդհանուր խոսակցության ժամանակ ջանք թափել վորեւ բան իմանալու :

Այդ ծրագիրն անսպասելի ու փայլուն կերպով իրա-դորժվեց :

Փոքր ինչ հարբած չինովնիկը գանդատվում եր ծառայության դժվարությունից, և յերբ մեկն ասաց, թե Հավանաբար ավելի դժվար ե լինում, յերբ փաստի միջոցով փողի խոչոր գումարներ են անցնում, չինովնիկը համաձայնվեց դրան և նկատեց, վոր վաղը նրան հենց այդպիսի որ ե սպասում:

— Մի՞թե վաղը փող եք սպասում:

— Այո, յերկու հարյուր հիսուն հազար՝ պետական բանկի համար:

Տեղեկությունն ստացված եր. ինդիրը վճռված: Չինովնիկին շուտով ցանեցին:

Այդ յերեկո հրավիրվեց եքսպուարիացիայի բոլոր ժամանակցողների վերջին, արտակարգ և ամենից կարեռը խորհրդակցությունը, վորտեղ դերերը բաշխվեցին այսպես. Պացիա Գալդավան անց ու դարձ ե անելու Պուչկինյան այգու առջեր և հետեւելու յե փոստին. յերբ փողով բեռնված կառքերը շարժվեն փոստի առաջից, Գալդավան հանելու յե գլխարկը պիխից:

— Պացիա, ցույց տուր, վո՞նց ես դու այդ անելու: Եեվ Պացիան ցույց ե տալիս:

— Լավ ե:

Ստեղկո Կիցկիրվելին կրկնում ե նշանը, վոր և փոխանցում ե Անետա Սուլամլիձեյին:

— Ցույց տուր, Ստեղկո:

Անետան կանգնելու յե «Դիլի-Պուճուր» ճաշարանի պատուհանի մոտ՝ վողորմություն ինդիրելու. դա աղդանշան կլինի ճաշարանում գտնվող մարտիկների համար:

— Ի՞նչպես պիտի դլուխ տաս ու վողորմություն ուզես, Անետա:

Անետայի դլուխ խոնարհելը տեսնելով, Բոչակուարիացիլին բաց արած լրադիրը ձեռքին ըլջելու յե. Յերեանյան հրապարակով: Դա Հարձակման աղբանշան ե լինելու Դաթիկո Զերբիացվիլու, Արկադի Ելբակիձեյի, Վանո Շիմշանովի, Վանո Կալանդաձեյի, Իլիկո Ճիշտիկովի, և Արմար Ճիշտիկովի:

Կամոն ծիծաղում եր:

— Ընկեր մարտիկներ, իսկ դուք ոռմբ նետել գիւղով: Այդ ցույց ե տալ պիտօք չե: Ընկերներ, յես ինձ վրա յեմ վերցնում հրապարակից ավելորդ ամբոխը ցրելը, վորպեսզի վնասվողներ չլինեն: Յեվ հետո, յես ինձ վրա յեմ վերցնում գրավելիք փողերը փոխադրելը: Վոչ վոք չի հակածառում, ընկերներ:

Աշխատանքի բաժանման դեմ վոչ վոք չի հակածառում:

— Ընկերներ, հարկավոր ե վորպեսզի ձեզնից ամեն ժեկը հետախուզի այն տեղը, ուր նա ստիպված ե գործելու:

— Բոլորս կհետախուզենք:

Փողոցից յեկան հայտնելու, վոր ինչ վոր կասկածելի դեմքեր են յերեացել:

— Վերջացավ, ցրվեցե՞ք:

Մեկը մյուսի հետեւից ամենքը բարեհաջող թաքնվեցին:

Այդ առավոտ Յերեանյան հրապարակը վողողված եր ամուսն արեկի վառ լուսով: Տների պատերն այնպես փայլում եյին, վոր դժվար եր առանց աչքերը կկոցելու նայել նրանց վրա: Բարակ չոր փոչին կախվել եր Սոլուակի վրա ամպի մշուշի պես: Յեվ անցորդները գլխարկն

ու փափախը քթին ելին քաշում՝ արեից պաշտպանվելու համար:

Կամոն սպայի համազգեսառվ անց ու դարձ եր անում հրապարակում։ Նա կանգ եր առնում անցորդների ու յուրաքանչյուր խմբի առաջ և ասում եր խիստ կերպով։

— Անմիջապես անցեք։

— Ի՞նչու։

— Ասացի, անց կացե՛ք։ Շուտո՞վ։ Յես ձեզ բացատրությո՞ւն պիտի տամ, թէ ինչո՞ւ։

Յեկ սպառնալի վրա յեր բերում հոնքերը։

Մարդիկ յերկշում մի կողմ ելին նետվում ու հեռանում՝ յետ նայելով ու գուշակություն անելով, թէ արդյոք ինչ եր նշանակում այդ ամենը։

Պահակատեղում կանգնած վոստիկանը տեսնելով սպայի ջանքերը՝ ինը ևս ամեն տեսակ աջակցություն եր ցույց տալու։

— Հեռացե՛ք։ Առաջ մի ընկնի։ Յետ գնա՞։

Կամոյի ընկերները պայմանի համաձայն դրավել ելին իրենց տեղերը։

Մոտենում եր ժամանակը, յերբ կարելի յեր փողերը դուրս բերելուն սպասել։ Սպասողների լարվածությունը հետզհետե ավելանում եր։ Կյանքը մազից եր կախված, ամենափոքրիկ զանցառումը, վորեե աններդաշնակ քայլու, սրա կամ նրա անվճռականությունը—այդ բոլորը կարող եր անողուտ արյունահեղության և կործանման հասցնել։

Սակայն այդ մարդկանց կրծքերում վճռական սիրտ եր բարախում։ Նրանց ուժգնորեն գրավել եր մի միտք, մի գաղափար—հեղափոխությունը։ Հանուն հեղափոխության նրանց մեծ մասը հրաժարվել եր անձնական

կյանքից, ուժին բարորությունից՝ դիտակցորեն իրենք իրենց տանջանքների ու մահվան յենթարկելով։

Յեկ այդ արևոտ առավոտյան, մահացու վտանգի չեմքին, նրանք կայտառ ու համարձակ կանգնել ելին իրենց դիրքերում։

Փոստում պետական բանկի գանձապահ կուրդյում մովը և հաշվետար Գալապնյան ստանում և հաշվում ելին փողը։ Փողերը յերկու տոպլրակի մեջ ելին։

Կուրդյումովն ու Գալապնյան փոխանակում ելին անհան նկատողություններ, կատակում ելին, ծիծառում։

Յերբ ընդունումը վերջացրին, նստեցին փոստային առաքումներով լի ճամպրուկի վրա և սկսեցին ծխել։

— Նո՞ւ, ամեն ինչ պատրա՞ստ ե։

— Այն բան։

— Ուղեկցորդ պահակախումբ կա՞։

— Կա։

— Ծիենք մի փոքր և ճամբա ընկնենք։

Նրանք ծխեցին վերջացրին իրենց գլանակներն ու գնացին։ Յերկու պահապահ զինվորներն յետեկից տարան փողի տոպլրակները։

Փոստի մուտքի առջև յերկու կառք և հինգ ձիավոր կողակ եր կանգնած։

Պահապահ զինվորներն ուզում ելին ամեն մի կառքի մեջ մի տոպլրակ դնել, բայց կուրդյումովն ասաց։

— Զե, յերկուսը միասին գրեք վերջին կառքում։ Յես կնսուեմ այստեղ, պահակի հետ։

Այդպես ել արին։

Դիտելով այդ բոլորը՝ Պացիս Գալդավան, կանգ-

ու փափախու քթին ելին քաշում՝ արեից պաշտպանվելու համար :

Կամոն սպայի համազդեստով անց ու դարձ եր անում հրապարակում : Նա կանգ եր առնում անցորդների ու յուրաքանչյուր խմբի առաջ և ասում եր խիստ կերպով .

— Անմիջապես անցեք :

— Ի՞նչու :

— Ասացի , անց կացե՞ք : Շուշառ'կ : Յես ձեզ բացատրություն պիտի տամ , թե ինչո՞ւ :

Յեվ սպառնալի վրա յեր բերում հոնքերը :

Մարդիկ յերկըու մի կողմ ելին նետվում ու հեռանում՝ յետ նայելով ու գուշակություն անելով , թե արդյոք ինչ եր նշանակում այդ ամենը :

Պահակատեղում կանգնած վոստիկանը սեսնելով սպայի ջանքերը՝ ինը ևս ամեն տեսակ աջակցություն եր ցույց տամ :

— Հեռացե՞ք : Առաջ մի ընկնի : Յետ գնա՞ :

Կամոյի ընկերները պայմանի համաձայն դրավել ելին իրենց տեղերը :

Մոտենում եր ժամանակը , յերբ կարելի յեր փողերը դուրս բերելուն սպասել : Սպասողների լարվածությունը հետզհետե ավելանում եր : Կյանքը մազից եր կախված , ամենափոքրիկ զանցառումը , վորեե աններդաշնակ քայլուր , սրա կամ նրա անվճռականությունը — այդ բոլորը կարող եր անոգուտ արյունահեղության և կործանման հասցնել :

Սակայն այդ մարդկանց կրծքերում վճռական սիրո եր բարախում : Նրանց ուժգնորեն գրավել եր մի միտք , մի գաղափար — հեղափոխությունը : Հանուն հեղափոխության նրանց մեծ մասը հրաժարվել եր անձնական

կյանքից , ամեն բարորությունից՝ դիտակցորեն իրենք իրենց տանջանքների ու մահվան յենթարկելով :

Յեվ այդ արևոտ առավոտյան , մահացու վտանգի չեմքին , նրանք կայստու ու համարձակ կանգնել ելին իրենց դիրքերում :

Փոստում պետական բանկի գանձապահ Կուրդյուտմովը և հաշվետար Գալավնյան ստանում և հաշվում ելին փողը : Փողերը յերկու տոպրակի մեջ ելին :

Կուրդյուտմովն ու Գալավնյան փոխանակում ելին անհան նկատողություններ , կատակում ելին , ծիծադրում :

Յերբ ընդունումը վերջացրին , նստեցին փոստային առաքումներով լի ճամպրուկի վրա և սկսեցին ծխել :

— Ե՞՞ւ , ամեն ինչ պատրա՞ստ ե :

— Ամեն բան :

— Ուղեկցորդ պահակախումբ կա՞ :

— Կա :

— Ծիենք մի փոքր և ճամբար ընկնենք :

Նրանք ծխեցին վերջացրին իրենց գլանակներն ու գնացին : Յերկու պահապան զինվոր նրանց յետելից տարան փողի տոպրակները :

Փոստի մուտքի առջև յերկու կառք և հինգ ծիավոր կողակ եր կանգնած :

Պահապան զինվորներն ուղում ելին ամեն մի կառքի մեջ մի տոպրակ գնել , բայց Կուրդյուտմովն ասաց :

— Զե , յերկուսը միասին դրեք վերջին կառքում : Յես կնստեմ այնտեղ , պահակի հետ :

Այդպես ել արին :

Դիտելով այդ բոլորը՝ Պացիս Գալդապահն , կանգ-

նած մնացել եր Պուշկինյան այդու մոտ վորպես արձան։  
Նրա աչքերը մեխվել եյին յերկու կառքի և ուղեկցորդի  
վրա։

Կուրդյումովը բղավեց։

— Շարժվի՞ր։

Յեվ կառքերը շարժվեցին։

Գայիշա Գալբավան անցավ մայթի մեջ տեղը և վո-  
րոշակի լայն շարժումով գլխից հանեց գլխարկը և վեր  
բարձրացրեց։

Նույն վարկյանին այն կողմում Ստեղկո Կիցկեր-  
վելին անմիջապես կրկնեց նշանը։

Այդ նկատելով՝ Անետա Սուլամլիձեն «Դիլի-Պու-  
ճուր» ճաշարանի լուսամուտների առջև սկսեց ձեռք  
տեկնել, խորը գլուխ տալ և վողորմություն խնդրել։

Ճաշարանում զտնվող մարտիկները վճարեցին փողը  
և դանդաղորեն վեր կացան տեղերից ու դեպի մուտքը  
դիմեցին։

Բայիշա Կուպրիաշվիլին բաց արած լրագրով պլտը-  
գում եր հրապարակի շուրջը՝ նախադգուշացնելով մնա-  
ցած մարտիկներին։

Այդ բոլորը տեղի ունեցավ մի ակնթարթում և կա-  
մոն տեսնում եր, վոր մոտենում և վճռական բոպեն։  
Նա, ինչպես կարսպայի համազգեստով, իր հերթին  
Գալավինյան փողոցում ցատկեց մի կառք և դանդաղ  
առաջ անցավ դեպի Յերևանյան հրապարակը՝ ատրճա-  
նակը տնտղելով։ Հրապարակի անկյունում կանգնեց  
սպասողական դրության մեջ։

Հեռվից ոլանում եյին կառքերն ու ուղեկցորդը,  
բարձրացնում տաք մանրիկ փոչու ամպ, վոր վողող-  
ված եր փայլող արևի ճառագայթներով։

Առջեկից արշավող կազակային սովեկցորդն արդեն  
ծովում եր դեպի Սոլոլակի փողոցը, նրանց հետեւից—  
առաջին կառքը... Մի ակնթարթ ել—ու դեպքը ձեռքից  
կդնա։

Կամոն ձգվել եր լարի նման և ցավ զգալու չափ սեղ-  
ժում եր ատրճանակի կոթը։ «Ինչո՞ւ յեն հապաղում։  
Ինչո՞ւ յեն դանդաղում»։

Բայց այդ բողեյին Դաթիկոն մի քայլ առաջ յեկավ  
և յերկու ոռումք նետեց առջեկի կառքի տակ։

Կինամոնագույն ծխի յերկու սյուն վերև ծառա-  
ցան... Մի վայրկյան անց՝ վորոտաց յերկու պայթյուն  
ևս... վրա հասած յերկու վոստիկաններն ընկան։ Կա-  
զակներից մեկը պոկից թամբից, և ձին քաշ տվեց աս-  
պանդակից կախ ընկած մարմինը... Առջեկի կառքի ձի-  
երը փախան սարսափահար՝ ջարդելով լծափայտը,  
կտրելով լծասարքի փոկերը, զիպչելով մայթի սյու-  
ներին. կառքն այս ու այն կողմն եր թուշում։

Հրապարակի վրա սկսվեց մի վայրենի խուճապ։  
Վոչ վոք եր հանկանում, թե իսկապես ինչ պատահեց,  
բայց պատահել եր սոսկալի մի բան։ Յեվ մարդիկ ան-  
մտորեն վազում եյին, ճակատ-ճակատի խփում, իրար  
գետին գլուրում, վեր կենում ու նորից վազում։

Պայթյունի ծխի պղասոր քողը տարածվել եր հրա-  
պարակի վրա։

Սակայն յերկրորդ կառքը, ուր նստած եր Կուր-  
Շյումովը, փողերի հետ անվնաս մնաց, նրա ձիերը պայ-  
թյունից խելաղարված՝ սլանում եյին Սալդատսկի բա-  
զարի կողմը։ Վախեցած կառագանը, փոխանակ ձիերին  
գուելով՝ մտրակում եր անընդհատ։

Կամոն տեսնելով այդ պատկերը՝ մտածեց, վոր

ամեն ինչ կորած և և իք կառքով շտապեց դեպի հրանդարակը՝ վորոնելու և փրկելու ընկերներին։ Նա կանդնած եր վոտքի և անընդհատ ու վայրենաբար դոռում եր ու կրակում, սարսափ տարածում անցորդների վրա, վորոնք առանց այդ ել շվարել եյին։

Փողերով լի կառքը սլանում եր հրապարակով։

Մարտիկ Բաչիան չկորցեց իրեն։ Նա մոտ վազեց կառքին և նրա առաջը կտրելով՝ հաջողացրեց մի ոռումք գցել, վորի պայմանունից ինքն ել գետին գլորվեց։

Կառքը կանդ առավ։ Ծառս յեղած ձիերը չեյին շարժվում տեղից։

Այն ժամանակ Զերբիաշվիլին ատրճանակը ձեռքին ցատկեց կառքի վրա և ամենաթույլ գեմալորության անդամ չհանդիպելով վախեցած պահապանների և կուրզումովի կողմից, վողի տոպրակները վայր նետեց գետին։

Վրա հասած Դաթիկոյի հետ միասին նրանք յերկուսով խցին տոպրակները և սկսեցին վաղել վելյամինովսկայա փողոցով։

Նրանք վազում եյին մահից, փախչում եյին այնպես, վոր ուժերի լարումից կուրծքը պատրաստ եր պայթելու, վաղ եյին տալիս ատամները սեղմած, ատըրճանակները ձեռքերին՝ պատրաստ թանդ ծախելու իրենց կյանքը...

Սակայն հանկարծ նրանց հետեւց լովեց արշավող զույգ ձիերի ձայն։ Պայտերի զրնդացն ավելի ու ավելի մոտենում եր։

Այժմ հասավ վերջը, — մտածում եյին նրանք և յետ դարձան յերես առ յերես հանդիպելու թշնամուն։

Բայց դա կամոն եր, դա աղատություն եր։

Նրանք թուան կառքի մեջ և ալայցան՝ մի փողոցից մյուսը չուռ գալով, մի նրբանցքից մյուսը ծովելով։ Յեվ անհւտացան։

Իսկ այդ ժամանակ Յերևանյան հրապարակում սկավել եր իրարանցումը։ Վաղում եյին վոստիկանները՝ ճամբին թրերը բռնած, վազում եյին զինվորները, հրացանները ձեռներին, վորպեսզի շրջապատեն հրապարակը, ժանդարմներն իրար եյին անցել։

Հրապարակում սակայն վոչ վոք չկար այլևս։

Նույն գիշերն ընկերներից մեկի բնակարանում տեղի յեր ունենում զրաված փողերի դննումը։

Բոլորն աղահ հետաքրքրությամբ կոացել եյին բաց արած տոպրակների վրա։

Նրանց մեծ հիանթափություն եր սպասում՝ գրաված յերկու հարյուր հիսուն հազար ոռերլուց հարյուր հազարից ավելին հինգհարյուրանոց կապոցներ դուրս յեկան։

— Մենք դրանք ի՞նչ ենք անելու։ Բատ կարգի համարներ են։ Վոչ մի տեղ չի կարելի մանրացնել։ Հենց վոր ձեռքներիս տեսնեն, իսկույն կծերբակալեն մեզ։

— Ստիպված ենք անհապաղ արտասահման տանել և փորձ անելու այնտեղ մանրացնելու։

Անմիջապես սկսեցին քննել այդ նախադիծը, իսկ յերկու որից հետո կամոն արդեն անցել եր արտասահման և ուղերձվում եր Բեռլին։

3.

Բեռլինում կամոն աղատում եր Միքսկի աղդանունով։ Ուսանողական Շարլոտենբուրգ թաղամասի մի փոքրիկ կայարանումն եր գտնվում նրա շատ փոքրիկ սենյակը,

Հենց տանիքի տակ : Նա առանձնաշած կյանք եր վարում  
և համարյա վոչ մի տեղ չեր դնում :

Իր գալու խոկ առաջին որերը կամոն միքանի ընկեր-  
ների բաժանեց հինգ հարյուրանոց վարկային թղթերը,  
վորպեսզի նրանք փորձ անեն մանրացնելու այդ թղթա-  
դրամները Բրյուսելի և Մյունիսենի բանկերում : Ինքն  
ել Բեռլինում զրադված եր քիչ-քիչ զենք և պայթուցիկ  
նյութեր հավաքելու դործով, փորոնք ուղղում եր մոտ  
ժամանակներում ամբողջ պարտիայով ուղարկել Ռու-  
սաստան : Իր գնածները թաղցնելու համար, նա կրկնա-  
կի հատակով մի սնդուկ ուներ :

Այդպես անցավ յերկու շարաթ առանց փորեւ գետ-  
քի՝ փողերը փոխելու համար գնացած ընկերներից լուր  
իմանալու տանջալի սպասումի մեջ :

Յեզ ահա մեկ անգամ յերբ կամոն յեկել եր պայ-  
մանավորված տեսակցության տեղը, կաֆեն, յեկած ըն-  
կերը նրա կողքին նստելով և նյարդորեն ծամելով յուղա-  
հացը՝ շատ մոտիկ թեքլեց դեպի նա և կամացուկ ասաց .

— Բանն այն ե, վոր ընկերներին ձերբակալել են  
Մյունիսենում և Բրյուսելում՝ բանկում փողերը մանրե-  
լու ժամանակ :

Այդ տեղեկությունն անհանգստացրեց կամոյին.  
ափսոսում եր ձերբակալված ընկերներին, վորոնց սպաս-  
ում եր Ռուսաստանին հանձնելը՝ ցարական դատարանի  
բոլոր հետեւանքներով հանդերձ, և մյուս կողմից մի  
միտք ծագեց գլուխում, թե իրեն ևս անհամառելու են-  
միջապես միջոցներ ձեռք առնել՝ զենքն ապահով տեղ  
թաղցնելու և չկալանավորվելու համար :

Կամոն շուապեց հյուրանոց : Յերբ նա սանդուխքով

արագ վերև եր բարձրանում, նրան կանդնեցրեց քաղա-  
քացիական չորերով մի անծանոթ պարոն :

— Ո՞վ եք դուք, — հարցրեց նա կամոյին և հարևան-  
ութիւնով ցույց տվալ ինչ վոր մի նշան :

— Յե՞ս :

— Դուք :

Յես Դմիտրի Միրսկին եմ :

— Զեր հպատակությունը :

— Յես Ավստրիական հպատակ եմ :

— Լավ : Տարեք մեղ ձեր գրաված սենյակը : Դուք  
այս հյուրանոցում եք ապրում :

Կամոյի դիմում վայրկենապես մի միտք ծագեց .  
այնտեղ զենքեր կան, պայթուցիկ նյութեր, անկեղալ  
զրականություն : Յեթե հայտնի, վոր ինքն այդտեղ չի  
ապրում :

Սակայն իսկույն գլխի ընկալ, վոր հյուրանոցի  
գրասենյակում անհապաղ կապարզեն նրա ինքնությունը :

— Այո, յես բնակվում եմ այստեղ :

Յեզ տարավ նրան իր սենյակը :

Նրանք կանչեցին յերկու ինչ վոր այլ պարոնների  
և խուզարկության դիմեցին :

Մեծ աշխատանք չեր հարկավոր գտնելու համար  
այն ամենն, ինչ վոր թաղցրել եր կամոն, — ատրճանակ-  
ներ և պայթուցիկ նյութեր . ինչ վերաբերում ե անկե-  
զալ ուսւ դրականության, ապա դրա հակերն աշկարա-  
ցանուցիր եյին սենյակի հատակին :

— Դուք ձերբակալված եք, ոլարոն Միրսկի :

Ու մի բոսկելից հետո կամոն յերկու անձնավորու-  
թյան հետ, վորոնք խուզարկություն եյին կատարել

նրա մոտ, ավտոմոբիլում նստած զնում եր Բեռլինի  
ելեկտրականությամբ վառ լուսավորված փողոցներով:

Նրա մտքն աշխատում եր լարված: Յեթե դերմա-  
նական իշխանությանը հաջողվի հաստատել, թե ո՞վ ե  
նա իսկապես, ապա նրան կարող են հանձնել ոռուս կա-  
ռավարության ձեռքը, իսկ դա անպայման մահապատիժ  
և նշանակում: Հարկավոր ե այժմ, հենց հիմա հնարել,  
մտածել մի այնպիսի բան, վոր ապահովեր նրան այդ  
հնարավորությունից կամ գոնե հեռացներ այդ:

Յեվ Կամոն ատամները սեղմած՝ մտածում եր հա-  
մառորեն:

Գալլս Եյին անկարեսոր մտքեր, ուշացած ամսո-  
սանքներ, ինչո՞ւ նա նախազգուշության հարկավոր մի-  
ջոցներ ձեռք չստավ, ինչո՞ւ գնաց իր հյուրանոցը, յերբ  
կարող եր չդնալ այնտեղ... Միքանի ատրճանակների  
և միքանի ֆունտ պայմուցիկ նյութերի համար նա խոր-  
տակեց իր կյանքը... ի՞նչ հիմար բան:

Բայց կամքի լարումով նա իրենից հեռու յեր վա-  
նում այդ մտքերը՝ կենտրոնանալով ներկայի վրա. ի՞նչ  
անել դրանից հետո:

Ու յերբ ավտոմոբիլն աղմուկով ու մոտորի ճար-  
ճատյունով ներս մտավ մի մեծ, մույլ շենքի բակը, Կա-  
մոն արգեն գիտեր, թե ինչ է անելու հետո:

Նրան բերին Մոարինի բանտը:

Բանտի գրասենյակում Կամոն կկոցեց աչքերը,  
չուրջը նայեց և անսպասելիորեն նստեց սեղանի վրա՝  
մի յերդ շվեյցարցնելով:

Նրան ուղեկցող յերկու անհամարությունները բըռ-  
նեցին նրա ձեռքերից:

— Վեր կացե՞ք, հիմար մի ձեւանաք:

Կամոն վեր կացամ:

Կալմանավորին ընդունող սպիտակ, կոչտ բեխերով  
շինովնիկն հարցրեց.

— Ձեր անո՞ւնը:

— Սովորական:

— Այսինքն՝ ինչպես թե սովորական:

— Այդպես:

Այս ժամանակ չինովնիկը դարձավ զեղի այն անձ-  
նավորությունները, վոր ուղեկցել եյին կամոյին:

— Դուք նախնական հարց ու փորձ կատարե՞լ եք:

— Այո:

— Նա պատասխանո՞ւմ եր:

— Այո: Ահա նրա պատասխանները:

— Լավ: Վաղն ինչպես պետք է կհարցաքննեն նրան:  
Սիրելիս, յեթե դուք մտածում եք մեզ խաբել հիմար  
ձեւանալով, հապա ձեզ անկամակած չի հաջողվի այդ:  
Մենք այստեղ շատ գիտուն մարդիկ ունենք... Տարեք  
նրան առանձին կամերա:

Յեվ յերբ կամոյին տանում եյին կամերան, նա  
ճամբին հարձակեց վերակացվի վրա՝ բոռնցքով խփե-  
լով նրա փորին:

— Համա՛ թե փոր ե: Համա՛ թե փոր ե:

Վերակացուն հրեց նրան, իսկ հետո ընկերոջ ողնու-  
թյամբ կամոյին խցկեցին կամերան:

Յերբ մենակ թողին նրան, հենց այդպես հատակին  
նստած, մեջքով գեալի գուռը, նա մի բոսի չունչ քաշեց:  
Նրա դեմքն խոլոյն այլ արտահայտություն ստացավ—  
արտահայտություն հողնածության և նողկանքի:

Սակայն նրա վարքի տակտիկան արդեն վորոշած

եր : Հարկավոր եր զարդացնել և խորացնել այդ, վորաչափ ել վոր դա դժվար լիներ :

Նրան ընթրիք բերին : Նա պնակը շուռ տվեց ձեռուերի մեջ և շրիկացրեց հատակին : Իսկ հետո սկսեց ինչ վոր բան փնտուել մահճակալի տակ, յերկար ու ապարդյուն :

Վերակացուն կանգնել ու դիտում եր նրան :

— Զվարճանո՞ւմ եք, պարոն Միքայիլ :

Գլուխը տարուբերեց ու հեռացավ :

Յերկու որ հետո բժշկական քննություն եր :

Յերբ բժիշկն յեկավ, կամոն կանգած եր՝ յերեսը դեպի անկյունը դեմ արած :

— Դարձե՞ք դեպի ինձ :

Բայց կամոն մնաց անշարժ :

— Դուք լսո՞ւմ եք, թե ի՞նչ եմ ասում : Լսո՞ւմ եք :

Կամոն չեր պատասխանում :

Այն ժամանակ բժիշկը հրամայեց վերակացուներին .

— Շուռ բերեք նրան դեպի ինձ :

Կամոյին շուռ տվին : Նա միքանի քայլ արեց դեպի առաջ և կանգնեց լայն բաց արած աչքերով : Հետո ձեռքերով քունքերն եր սեղմում ու անքում :

— Ի՞նչ ե յեղել ձեզ :

Կամոն ժպտաց շվիթված, խղճալի ժալիտով :

— Մեռած լինել—չապրել :

— Ի՞նչ եք ասում :

Կամոն չպատասխանեց :

— Նստեցրեք նրան այստեղ, տարուբետի վրա : Կամոյին նստացրին : Բժիշկն սկսեց հետազոտել

աեֆլեքսները, խփում եր մուրճիկով, քննում բէրբերը : Հեռանում եր, նայում կամոյին, նորից անցնում հետազոտության :

Հետո ինչ վոր բան գըեց դրօնույկում :

— Լալ : Առայժմս նա կմնա այստեղ :

Ու զնաց :

Միջանցքում նա ասաց վերակացուներին .

— Հետեւել նրան, յերբ նա մենակ կմնա :

— Մենք հետեւում ենք, պարոն բժիշկ : Բայց նա ամեն ժամանակ այդպես է : Ամբողջ ժամերով կանգնում է յերեսը դեպի պատը, կամ նստում հաստակին, կամ յերգում կամ անվերջ ինչ վոր բան ե փնտում բոլոր անկյուններում :

— Լալ : Սակայն և այնպես գուք հետեւեցեք նրան և զրի անցկացրեք ձեր դիտողությունները : Դա ինձ հարկավոր է :

— Կանենք, պարոն բժիշկ :

Կամոյի բանտարկության լուրը տարածվեց ոռուեմիջրանտական դադութում : Դա մեծ անհանդատություն առաջ բերեց : Ամենքը, ով քիչ թե շատ ծանոթ եր Կամոյի անցյալին, զիտեր, վոր հրապարակի վրա Կամոյի կյանքի հարցն եր դրմած : Որու և գերմանական կառավարությունների համարերություններն այնպիսին, վոր փոքրիկ պատրիարքակով, փոքրիկ հնարավորության դեպքում գերմանական կառավարությունը ոռուականին եր հանձնում ամեն քաղաքական եմիգրանտի, յեթե նրա դորձունեյությանը կարելի յեր կողմանել քրեական հանցանք հիշեցնող գոնե վորեե մի բան : Իսկ Կամոյի դորձն այնպես եր, վոր նա իր անցյալում յեղեւ ապացուցված մասնակից միքանի եքսպրոսպրիացիա-

ների՝ մարդկային գոհերով, մասնակցել եր կառավա-  
րության աղենտների վրա կտտարված մահափորձերի  
և այլն: Վոչ մի կառկած չեր կարող լինել այն մասին,  
վոր կամոյի անձնավորության լինքությունը ճշտելուց  
հետո՝ նա հանձնվելու յեր ոռու կառավարության ձեռ-  
քը:

Բերլինի բայլչեիները վճռեցին դիմել զերմանա-  
կան սոցիալ-դեմոկրատական կուսակցության՝ խնդրե-  
լով գտնել կամոյի համար մի պաշտպան, վոր դրազդի  
նրա գործով: Գերմանական սոցիալ-դեմոկրատներն  
այդ բանն հանձնեցին փաստաբան Ռոկտը կոնին:

Ռոկտը կոնը յեկալ բանու, կամոյի մոտ և խոսեց  
նրա հետ բանտարին վերակացվի ներկայությամբ:

Պարզ է, վոր այդպիսի պայմաններում կամոն չեր  
կարող գործնական մի բան առել. նա շարունակում եր  
խորոշնոր ձևանալ:

Տայր անիմաստ կերտով պատասխանելով կոնի  
հարցերին, կամոն այնպիս եր նայում նրան, այնպիսի  
շարժ ու ձև եր անում, վոր կոնի համար միանդամայն  
պարզ եր, թե կամոն սիմուլյացիա յե անում:

Մոտ կես ժամ նստելով նրա մոտ՝ փաստարանը  
գնաց:

Կոնը Բերլինի բայլչեիներին հայտնեց կամոյի սի-  
մուլյացիայի մասին և ավելացրեց, վոր այդպիսի տակ-  
տիկայի հաջողությանը վոչ մի հույս չկա, քանի վոր  
գոյություն ունեն խելազարությունը ճանաչելու որյեկ-  
տիկ նշաններ և իսկական սիմուլյացիան պահանջելու  
յե կամքի ու իքնազստության բոլորովին չլուած ուժ:  
Այնքան, վորքան կամոն կանգնել եր այդ ճամբի վրա,  
կոնի խորինը չափաղանց հեշտանում եր և հանդում այն

բանին, վորպեսդի գործի ընթացքում կամոյի, վորպես  
դատի տակ գտնվողի, շահերի ձևական խախտում չլինի:

Պաշտպանի այդ յեղակացությունը շատ քիչ ու-  
ժախացըրեց կամոյի բարեկամներին: Այժմ մնում եր  
հույս դնել միմիայն այն հանդամանքի վրա, վոր գեր-  
մանական իշխանություններին չի հաջողվի հաստատել  
կամոյի անձնավորության ով լինելը:

Անցնում եյին որեր, շարաթներ, ու ամիսներ՝  
մի լուսիսություն չըներելով կամոյի դրության մեջ:  
Այնինչ նա սկսում եր հոգնել ու տանջվել: Ամբողջ որե-  
լով ու դիշելներով խելազար ձևացնելու անհրաժեշ-  
տությունը, հետեւ իր ամեն մի խոսքին, ամեն մի  
շարժման, իր գեմքի արտահայտությանը, յերբեք հնա-  
րակորություն չունենալով իրեն զգալու միայնության  
մեջ, ինքն իր հետ, վորովհետեւ դռան միջից անաղմուկ  
բացվող անցքը ամեն մի վայրկյան թույլատրում եր  
վերակացուներին անտեսանելի կերպով հետեւ նրան,—  
այդ բոլորը կամոյի համար անտանելի յեր դատնում:

Զնայած այն բանին, վոր գալիքն անորոշ եր և հղի  
ահավոր վտանգներով, նա վճռեց մի կերպ առաջ մղել  
եր գործը մեռած կետից:

Այդ որն առավոտից կամոն անցուդարձ եր անում  
կամերայում և յերգում: Նա այդ անում եր դիտմամբ,  
վայրենարար և ձայնի ամբողջ ուժով: Վերակացուն մի  
քանի անդամ բացեց դռուը և հրամայեց նրան լոել:  
Սակայն կամոն շարունակում եր մոլեղնած յերգել ու  
դուել վոտներով:

Իսկ հետո բոլորովին մերկացով և սկսեց յերդելով

պարել: Այս ժամանակ բարկացած վերակացումն ներս  
մտավ կամերա:

— Եռել: Մարշ ձեր տեղը: Յես այդ անկարգու-  
թյանը մի բոպեյում վերջ կտամ:

Բայց կամսն հանկարծակի հարձակվեց նրա վրա,  
բոնեց մաղերից և յերեսը խփեց սեղանին:

Վերակացուն ողնություն կանչեց:

Մի քանի բոպեյից հետո կամոյին կարցեր քարշ  
ավին:

Կարցերը գտնվում եր ուրվուր ներքեւ, գետնափո-  
րում, և մինչեւ կամոյին սայթաքուն, խոնավ աստիճան-  
ներով քարշ եյին տարիս այստեղ, նա հուսահատ ու  
խենթորեն գոռում եր: Վերջապես նրան դռնից ներս  
գցեցին ու կողակեցին:

Նա միանդամայն մերկ եր, թեպետ կարցերում ան-  
տանելի ցուրտ եր: Վորպեսզի տաքանա, նա թոշկոտում  
եր մինչեւ հալից ընկնելը: Հետո հանդստանում եր՝  
կանդնելով յերեսը գետի անկյունը և վեր քաշելով մերթ  
մեկ, մերթ մյուս վոտքը:

Դրությունը տանջող եր: Բայց մատնել իր զգացո-  
ղությունները, իր համար չոր խնդրել նա անկարող եր-  
դա կփշացներ նրա բոլոր ծրագրները:

Այդպես ցրտից սաստիկ տառապելով, նա անցկաց-  
րեց այդ որվա մնացորդը և ամբողջ դիշերը մինչեւ լույս:

Առավոտյան յեկան նրա յետերից:

— Հաղնվեցե՛ք, բժշկական քննություն ե:

Սակայն նա չհագնվեց:

Վերակացուները զոռով հաղցրին նրան:

Այս անդամ նրան քննում եյին յերկու բժիշկ—մեկը

թերիտասարդ, սև ու վայելչակաղմ, մյուսը չշնջունով  
լոսող, վատատես աչքերով մի ծերունի:

Ծերունին թերթում եր թղթերը և շնչում:

— Միբակի, Միբսկի... դա հենց նա յե... իսկ ի՞նչ  
անենք մենք նրան... Հարց ու փորձ արեք նրան: Նա...  
նա ինքը Պետրոսյանն ե: Նա թագցնում է իր անունը:

Կամոն կանգնել եր՝ բութ հայացքը գցելով իր առա-  
ջեւ: Ուրեմն նրա անունը պարզված ե... Այդ կարեռ ե,

— Նստեցե՛ք:

Կամոն նստեց:

— Զեր անո՞ւնը:

Կամոն լուս եր:

Դուք վորեւ հիվանդություն ունեցե՞լ եք մանուկ  
հասակում:

— Քացախ շատ եյի խմում և հաղում:

— Յեկ ուրիշ վոչնչով չե՞ք հիվանդացել:

— Ատամներս են ցալել:

— Այդպես: Սիբիրյան վո՞ր գետն և հոսում դեպի  
հյուսիս:

— Ամուր... Տաբուլսկ... վոչ, դուք մի կարծեք,  
թե յես մոռացել եմ: Իսկ առաջ փակ աչքերով ել գի-  
տեյի:

— Վո՞քան բնակիչ կա թուսաստանում:

— Յերկու միլիոն:

Կամոն հանկարծ հրանաց ամբողջ կրծքով:

— Վոչ, մոռացել եմ: Յերկու հարյուր միլիոն:

— Ի՞նչ գիտեք դուք Պետրոս Մեծի մասին:

Բատ իս, յեղել ե այդպիսի թագավոր: Կարծե՞մ...

Յերիտասարդ բժիշկը զարձավ ավագին:

— Դարձյա՞լ հարցնել:

Նա թափահարեց ձեռքը :

—Պետք չե : Յեկե՛ք քննենք :

Յեվ ահա Կամոյին նորից չուռ ու մուռ տպին ամեն կողմ , մուրճիկով թիթխացրին , ականջ դրին , ձեռքի ափերով շրջմիացնում եյին կաշվին , հետաղոտում ձեռքերի ու վոտքերի ռեֆլեքսները և բիբերի նեղացումը :

— Յես մտածում եմ նրան ուղարկել հատուկ հետաղոտության :

— Յես համաձայն եմ :

Յեվ թիշկներն իրենց յեղրակացության մեջ գրեցին , վոր անհրաժեշտ են համարում Միրսկուն ուղարկելու հոգեբուժական հիվանդանոցը՝ հատուկ հետաղոտության համար : Այդ յեղրակացությանը չուտով հետեւ Լանդ Գերիխտի դատախաղի առաջարկը .

«Հոգեբուժական հիվանդանոցների վարչության : Խնդրում եմ տալ յեղրակացություն բանտարկյալ Դմիտրի Միրսկու մտահասության մասին» :

#### 4.

Կամոյին տեղափոխեցին Հերցբերդի հոգեբուժարանը :

Այդտեղ նրան տարան բախչիչ բաժանմունքը՝ ընդհանուր սենյակը , ուր գտնվում եյին յերեսուն հինգ հիվանդներ , վորոնք դեռևս չեյին բաժանված ըստ հիվանդության կատեղորիխյին :

Ծանր ժամանակ եր այդ :

Հիվանդների մեջ կային մի քանի կատաղիներ , վորոնք գոռում եյին , կովում , ճանկում , կատարյալ խելագարության եյին հասնում և սպանությամբ սպառնում :

Այն բողեյից , յերբ բերին Կամոյին , նա անշարժ

նստեց անկյունում՝ հրաժարվելով կերակրից և ամեն տեսակ խոսակցություններից : Յերբ մի քանի անդամ խոսելու փորձ արին , նա լոելայն պաշտպանվում եր վոտներով :

Յերկրորդ որը նրան տարան առանձին սենյակ : Այստեղ ել նա շարունակում եր հրաժարվել կերակրից : Վճռած եր բոնի սնուցման դիմել :

Յերկու վերակացու և Փելտշերը փորձեցին անել այդ բանը , բայց Կամոն ուժգին դիմադրություն ցույց տվեց և զործը վերջացավ նրանով , վոր ջարդեց իր յերկու առջևի ատամները :

Յերբ նրան հանդիսաւ թողին , նա ատամները դրեց բոի մեջ , յերկար դիմեց , զնեց , խիլ հետո սկսեց նրանցով խաղալ , ինչպես յերեխա , —վեր-վեր զցել ու բռնել :

Վերակացուները վորոշ ժամանակ նայում եյին այդ զվարճալիքին :

— Սատանան դիմե դրան , արդյոք կոմեդիյա եներկայացնում , թէ լուրջ բան ե :

— Ասում են , վոր ոռու մեծ վոճարդործ ե :

— Նու , այդ դեպքում ներկայացում տալու պատճառ կա :

Նրանք դնացին : Սակայն փոքրիկ պատուհանը պատի վրա անընդհատ բացվում եր , մեկը նայում եր այնտեղից :

Կամոն վճռեց ալելի զոռ անել : Վորքան անմտություն , այնքան լավ :

Նա նստեց մահակալի վրա և սկսեց իր մաղերը պոկտել ամրող փնջերով , այդ վնջերը նա դարսում եր իր շուրջը , վերմակի վրա և կամացուկ յերդում՝ մի կողմից դեպի մյուսն որորվելով :

Թող լինի հիշատակ իմ ընկերներին:

Վերակացուն մտիկ տվեց զոնից, նայեց այս տեսարանին և անհետացավ: Մի բողեյից հետո թժիշկն յեկավ և նույնպես նայեց կամոյին:

Բժշկի շրթունքները ծոմովեցին:

«Դա զարհուրելի յե»:

Նա կանդնեց դարձյալ մի քանի վայրկյան՝ դիտելով:

«Վոչ, պետք ե մի կերպ լուծել այս, — մտածեց նա: — Այսպես շարունակել չի կարելի»:

Այդ բժշկի դեկուցման հիման վրա, բժշկական կոմիտան վորոշեց.

«Միրսկի-Պետրոսյանին յենթարկել հատուկ հետազոտության՝ նրա մտահասության աստիճանը վորոշելու նպատակով»:

Կատարեցին նաև այդ հատուկ հետազոտությունը:

Կամոյին տարան բժշկական կարինետը, ուր նշան արդեն սպասում եյին մի քանի թժիշկներ:

Այս անգամ նրան վոչ մի բանի մասին չհարցրին: Բայց նորից շոշափում եյին, թըխլթխացնում, ունկնդրում, ոեֆլեքսները փորձում:

Եել այնուհետեւ անցան այն բանին, վոր հայանութեն, պետք եր անվանել հետազոտության «առանձնահատուկ մեթոդներ»: Կամոյին ծակծկում եյին քորոցներով, դաղում շիկացած յերկաթածայրերով, քննում բիբերի լայնացումը և անընդհատ խոսում եյին, վիճում իրար հետ՝ գործածելով բժշկական անհասկանալի բառեր:

Կամոյն այդ ամենին վերաբերվում եր արտօքուսք բոլորովին անտարբեր: Նա վոչ մի անգամ չցնցվեց ցա-

վից, վոչ մի խոսք չասաց այդ ձեռնածությունների համար, վոր կատարվում եյին նրա վրա: Կարծես այդքուրով վերաբերում եր մի ուրիշին: Նա նստել է անշարժությամբ կողոցած՝ նայում ե ելեքտրական լամպերին:

Յերբ յետ տարան, բժշկները դեռ յերկար վիճում եյին իրար հետ: Իսկ հետո կաղմեցին հետևյալ յերգակացությունը:

«Պետրոսյան—Միրսկու վարչի բնորուշ գծերը չեն կարող յերկար ժամանակ կեղծվել: Այդպիս պահում ե իրենց միայն խակական հիվանդը խելազար վիճակում: Բնդմիչտ հիվանդ կմնա:

Այդ յեղբակացությունը կամոյին հայտնի դարձավ մյուս որը: Դա հույս եր ներշնչում նրան, վոր Գերմանիուս որը: Դա հույս եր ներշնչում նրան, վատարանը չի նիան Ռուսաստանին չի հանձնի իրեն, վատարանը չի դատի, բայց մինչև վախուսուր ստիպված ե լինելու գժանոցում մնալ:

Սակայն բաղզը անսպասելի բան եր պատրաստել նրա համար: Լանդգերինստի դատախաղը ստանալով բժշկական կոմիսիայի յեղբակացությունը՝ հետևյալ վորոշումն արավ:

«Պետրոսյան—Միրսկին վորպիս անհուսալի հիվանդ, չի կարող պահպան գերմանական ազգաբնակչության միջին թագավորությունում յենթակա յե Գերմանիայից վատարվելու ջոյներթիվ, ուստի յենթակա յե Գերմանիայից վատարվելու և հանձնվելու ուստի կառավարության անորինությանը»:

Համաձայն այդ վորոշման՝ կամոն հանձնվեց Ռուսաստանին:

5.

Աշնանային ցեխուո, խոնավ մի յերեկո պնացը քառականային ցեխուո, խոնավ մի յերեկո պնացը քառականային Ալեքսանդրովո կայարանին:

Կուրեյում կամոյի հետ միասին նստել ելին դեր-  
մանական ժանդարմն ու սանտարը : Նրանք ծխում ելին  
իրենց ծխամորձը՝ ամենափռքիկ ուշաղրություն ան-  
դամ չղարձնելով կամոյի վրա :

Իսկ նրա առջև նորից բացվեց իր անորոշության  
վիճը : Նու, լավ, նրան հանձնում են վորպես անհուսալի  
Հոգեկան հիվանդի : Բայց ոուս բժիշկներն ընդունում  
են արդյոք նրա հիվանդությունը : Յեթե չեն ընդունում,  
ապա դինվորական դատարան և մահ եր սպառնում  
նրան . . . Եեվ արդյոք գերմանական կառավարության  
կողմից մի հասարակ ոյին չե՞ր նրան անհուսալի հիվանդ  
ճանաչելը, — ոյին՝ հնարիված միայն նրա համար, վոր-  
պեսդի առանց քաղաքական մեծ աղմուկի և արդելքների  
նրան հանձնեն Ռուսաստանին :

Յեւ կամոն կրկին ու կրկին, ինչպես վոր դա շատ  
անդամ յեղել են նրա կյանքում, հավաքում եր իր հողե-  
կան ուժերը և փորձում իր կամքն ու ինքնազապումը՝  
նախքան հայրենիքում իր նորից յերեալը, վոր տյնքան  
վտանդներ ու տառապանքներ եր խոստանում նրան :

Դնացք մոտեցավ Ալեքսանդրովու կայարանին : Այդ-  
տեղ արդեն կամոյին սպասում ելին ոուս ժանդարմները՝  
հատկաես դիմավորելու համար ուղարկված :

Ամեն կողմից այդ պատվի պահպաններով չըջապատ-  
ված, հետաքրքրվող հասարակության միջով կամոն ան-  
ցալ դեպի ժանդարմական սենյակը :

Այնուեղ նրան ընդունեց ժանդարմական սոտմիստ-  
ըը :

Նա մի ամբողջ ըոսկ իր ծաղրական ու չար աչքերով  
նայում էր նրան :

— Բարեհաճել եք հայրենիք չնորհ բերել :

Կամոն լուս եր :

— Լուսմ եք : Դե՛հ, լա՛վ, հետո կխոսնիք :

Ռոտմիստրը զերմանական ժանդարմին ստացական  
տվեց՝ կամոյին ստանալու համար և ժանդարմն ու սա-  
նիստարը գնացին :

Սյան ժամանակ ոտոիմիտրի վերաբերմունքը հիմնա-  
կանորեն փոխվեց :

— Լոռում ես, սրի՛կա : Առո՞ւշ ես ձեւանում : Զեա-  
ցի՛ր, հալալ լինի : Նիկոնով, շղթայիր գրան կապանք-  
ների մեջ : Կուղարկենք արագընթաց զնացքով :

Յեվ յերկաթը զբնգաց մուրճի տակ : Կամոն չղթայ-  
ված եր վորքի և ձեւքի կապանքներով :

— Սա Գերմանիան չե, շան վորդի : Մենք այստեղ  
դայակ չենք լինի քեզ : Գցեք զրան մութ սեկը, մինչեւ  
զնացքի դալը :

Կամոյին փակեցին վանդակավոր ինչ վոր մի նկու-  
ղում :

Նա գնում-գալիս եր այդտեղ, ինչպես դերի ար-  
ծիքը վանդակում : Հայրենիքն առանց դպվանքի նը դե-  
մավորում նրան : Վոտքի շղթաների զբնոցի տակ նա  
մտածում եր այն մասին, թե իրեն ո՞ւր կտանեն — Մուկ-  
վա՞ , Պետերբո՞ւրգ, թե՞ Թիֆլիս :

Վագոնում նա հարցրեց ժանդարմին :

— Ո՞ւր ենք գնում :

— Առայժմ-մոտիկ կայարանը :

Բայց առավտայան պատուհանից գուրս նայելով և  
կայարանների անունները կարդալով՝ նա հասկացավ,  
վոր իրեն տանում են դեպի հարավ — Թիֆլիս :

Թիֆլիսում նրան կայարանից կառքով արագ տե-

ղափոխեցին Մետեխի բանուը : Յեկ այն, վոր նրա ձեռքն  
ու վոտքը շղթայեցին և այդ փառահեղ կառքը—ամեն  
ինչ ասում եր, թե նրա դործը լրջանում է :

Բայց Մետեխի բներդում, ի զարմանս կամոյի, նրան  
վոչ թե առանձնացրին, այլ տեղավորեցին քրեականների  
հետ ընդհանուր կամերայում : Դրանք տասն հինգ հոդի  
ելին և նրանց մեջ եշտում ելին տաժանակիր աշխատան-  
քի բարերը : Քրեականների գլուխն ելին անցած յեր-  
կու «իվաններ»—յերկու հաղթանդամ բանդիաներ, վո-  
րոնք իշխում ելին մյուսների վրա : Նրանք ծաղրով ու  
զանազան նկատողություններով հանդիպեցին կամոյին՝  
աշխատելով ընդհարման կանչել նրան և միանդամից  
ընկճել ու իրենց հպատակցնել : Իսկ կամոն լուռթյամբ  
տանում եր, «նիսով լսում նրանց լուրոր կատակները :  
Նու կամերայի մէն անկյունից մյուսն եր անցնում» հոն-  
քերը կիտած ու շղթաները զբնդացնելով :

Այն ժամանակ իվաններից մեկը խոսքից դործի ան-  
ցավ : Լերցրեց ամոր հացի մի կտոր՝ և ձեռքի շրթակոցով  
կպցրեց կամոյի ՏԵՂՔԻՆ : Յեկ հենց նույն ակնթարթում  
դլուզեց հատակին՝ շանթված ծնոտին իջած թարու հար-  
փածից, վոր հասցրեց նրան կամոն :

Կամոյի աչքերը փայլում ելին ինչպես կայծուիկ-  
ներ :

— Զհամարձակվես ինձ ձեռք տալ, գարշելի :

Հատակից վեր յելնող իվանն ուղղում եր հարձակվել  
նրա վրա, բյաց հանկարծ կանգ առավ : Զավարանց շատ  
ուժ ու կամք կար կամոյի կերպարանքի, նրա պատղա-  
ցող աչքերի և կիտած խիտ հոնքերի մեջ : Իվանը սիրա-  
շարագ նրա վրա հարձակվելու :

Կամոյի համբաւն աղահովված եր :

Իսկ յերբ նրա հետ ապրողներն իմացան, վոր նա  
մեղադրվում ե նբալրոպրիացիայի կատարման մեջ, վո-  
րին բոլորը նախանձում ելին, վորի շուրջն արդեն առաս-  
պելներ ելին հյուսել, —նբան սկսեցին ամենայն ուշա-  
դրության և պատիվի արժանացնել :

Նույն որը բանտային դրուանքի ժամանակ կոմոն  
դիմարկի ոգնությամբ մի հիվանդ ճնճղուկ ունեց և իր  
հետ բերեց կամերա :

Նա զբաղվեց ճնճղուկի դաստիարակությամբ և ան-  
վանեց նրան Պետական :

Մի քանի որից հետո լույս տեսավ կովկասի զինվո-  
րական շրջանի զորքերի հրամանատարի հրամանը .

«Ճեր-Պետրոսյանին, նա լինքը կամոյին, հանճել  
կովկասին զինվորական—շրջանային դատարանին դա-  
տապարտելու պատերազմական ժամանակի որենքի հա-  
մաձայն» :

Սպասելով դատաքննությանը՝ կամոն դրադված եր  
նրանով, վոր մնում և ամեն կերպ դուրգուրում եր իր  
ճնճղուկ Պետականին ու սովորեցնում նրան : Կամերայի  
քրեական հանցավորների հետ նա ձգտում եր մինիմում  
հարաբերություն պահպանել, և այդ հարաբերություն-  
ները նրա համար խաղաղ ու դյուրին ելին լինթանում :

Յերբ քրեականներից մեկին դատարան տանելու հա-  
մար, կամոն նրան խնդրեց ուղեկցորդի միջոցով զըսւ-  
թյուն ուղարկել յուր քույլը Զավահիրին :

Նամակում նա գրել եր . «Բո Սենկոն Թէֆլիսումն է :  
Շուտով լինելու յե զինվորական դատարան : Արի» :  
Քրեականը գրությունը թաղցրեց վոտնամանի մեջ  
ու գնաց :

Զահարիքը նամակին ստանալով՝ մի վայրէլյան ուրասիսցով, վոր Կամոն թիֆլառումն ե, սակայն հաջորդ վայրկյանին վախը սեղմեց նրա սիրտը. «Զինվորական դատարան, զինվորական դատարան...» :

Նաև վաղ տվեց Կամոյի ընկերների մոտ : Նրանց մեջ ել խորհրդակցություն կար, թե ի՞նչպես աղատել Կամոյին : Ի՞նչ կարելի յեր անել : Փախուստ Մետեխի բերդից :

— Անկարելի յե :

Յեվ Կամոյի ընկերներն սկսեցին տխրել :

Թիֆլիսի զինվորական-շրջանային դատարանի դաշտի ժամանեցուն եր :

Այդ որը պետք եղատելին Կամոյին :

Բույր աթոռներն ու անցքերը դրավված ելին Թիֆլիսի բանվորներով ու Կոմայի ընկերներով՝ չաշված մի քանի քաղաքացիների, վորոնք ներս ելին ժողով այդակղ ուրարտությունից : Դատական դահլիճն անսովոր տեսք եր սատցել : Հասարակության մեջ ելին Կամոյի մայրը և քույրերից մեկը : Զավահէրը և Կոտոն տառանձին ելին նստած : Նրանց մոտ նստել եր լիոնցի մի կին, նա, վոր մի ժամանակ իր վրա յեր վերցրել կազ սկահպանելու դորձը :

Դունելի մոտ խմբած եր պոլիցիան : Բացահյա կերպով ձեռք ելին առնված հատուկ միջոցներ դատարանում կարդը պաշտպանելու և վերջ տալու մեղադրյալին ադատելու ամեն մի փորձի, յիթե այդ բանը տեղի ունենար :

Հասարակության մեջ խոսում ելին, հաղում, քիթ մարդում . անհամբերությունից շարունակ չարժման մեջ ելին :

Վերջապես ներս բերին Կամոյին :

Նրան տեսնելով, Զավահէրի սիրտը ճմլից—այնքան նա նիշար ու գունատ եր և այնպիսի քառյլ կրակով ելին վառվում նրա աչքերը :

Ինչ վոր անբնական կերպով ձգված յուղիղ ինչպես մայրու, նա մոտեցալ մեղադրյալի սեղանին ու նստեց : Եվկ այդպիս հինգ բոսք նստելուց հետո՝ նա սկսեց եր շուրջը նայել :

Ամեն կողմից նրան դլխով ելին անում և ժպտում բարեկամական դեմքեր, վորոնք սիրով նայում ելին նրան : Այդ դեմքերը ալեկոծեցին Կամոյի սիրտը : Երազեմքին ել վայլեց ժպիտը, և նա իր հերթին սկսեց բարենալ աջ և ձախ : «Ահա այստեղ ե Զավահէրը, ինչ սիրելի յե նա... Ահա և մայրը...» :

Այդ ժամանակ դատարանի ամբիոնից լսվեց մի բարձր ձայն :

— Դատարանը դալիս ե, վո՞տքի :

Գւըլորն աթոռները տեղերից շարժելով, վեր կացան :

«Գործ»-ի հաստ կազմը սեղանին դնելով՝ դատավորը ընդհատ-ընդհատ հայտարարեց հասարակությանը :

— Նստեցեք :

Յերբ կատարվեցին գործը լսելու առթիվ բոլոր ձեւական հայտարարությունները, դատավորը կանչեց :

— Մեղադրյալ Պետրոսով :

Կամոն մնում եր լեզում նստած :

— Մեղադրյալ Պետրոսովով, վո՛տքի : Յես ձեզ եմ  
կանում :

Իսկ Կամոն չարունակում եր նստած մնալ :

Սուտեցավ ուղեկցորդներից մեկը և կոնտակերից  
բռնելով՝ բարձրացրեց նրան :

Դատավորն սկսեց սովորական հարցերի շարքը—  
անվան, կոչման, տարիքի, աղջության մասին :

Բայց Կամոն և վոչ մի հարցի չպատասխանեց :

Դատավորը մի քանի վայրկյան տարակուսանքով  
նոյում եր նրան :

Հետո ինչ վոր խորհրդակցեց ի՞ւ ա՞ն և ձախ կողմե-  
րում նստած դատարանի անդամների հետ և վերջապես  
ասաց դատարանի քարտուղարին :

— Կարգացեք մեղադրական ակտը :

Սկսվեց ընթերցումն անվերջ մեղադրական ակտի,  
ուր ճշգում եր Կամոյի փոճրագործությունների յերկար  
շարանը, վոճրագործություններ, վերոնց ոպատճառով  
իշխանությունը վիճակում եր Կամոյին : Այդտեղ նշված  
եյին և անլեզալ տույժանների կաղմակերպումը և դենքի  
ներմրւծում, և լարարատորիանը րի կաղմակերպում  
առաջեր պատրաստելու համար, և եքսուրուսրիացիան-  
ներ :

Դատարանի նախադահու լսում եր զլուխը կախի և աշ-  
քերը կլոցած : Նա ցըլած եր և ինչ վոր բան եր գծում  
ձձողականի վրա :

Կամոն ամեննեին չեր լսում մեղադրական ակտը,  
կարծեւ դա նրան խախի չեր վերաբերում :

Հասարակության մեջ գտնվող խանչորներն ընդհա-  
կառակը, ամբողջովին ուշադրություն եյին դարձել:  
Մեղադրական ակտը, դա մի վեսլ եր անյերկուդ արկու-

թյան, անսահման նվիրվածության, ամեն տեսակ տան-  
չանքների հանդեպ անձնազոհի պատրաստկամության  
մասին մի բայլը կոչեցիկ-հեղափոխականի կողմէց, վորին  
դատում ելին այդ որը :

Յեկ բանվորները, տիրությամբ ու սիրով, իրենց  
աչքերը հեռացնում եյին դատարանի քարտուղարից,  
վոր միենանույն տոնով կարդում եր յերկաթու կամքի այդ  
սիրագործությունների մասին, և հառում կամոյի վրա,  
վոր նստել եր կորաքամակ :

Ընթերցման կիսին Կամոն ձեռքը ծոցը տարավ և  
հանեց ճնճղուկ Պետքային, իր բոստ մանրեց հացի մի-  
ջուկից և սկսեց կերակը նրան :

Առաջին սկահին վոչ վոք չնկատեց այդ :

Բայց քիչ հետո Կամոն անսպասելիորեն վեր կացավ,  
քայլեց զեպի դատավորի սեղանը և նախադահի առջև  
դրեց հացի մնացորդը :

— Գուցե դուք կուտե՞ք :

Նախադահը նրա վրա գցեց զարմանքից կլորացած  
իր աչքերը :

— Այդ ։ ի՞նչ բան ե :

— Սա Պետքայից ե մնացել :

— Վո՞ր Պետքայից :

— Մի այլպիսի ճնճղուկ կա, իմ ընկերը :

Նախադահը գունատվեց, հետո սաստիկ կարմբեց  
զայլը ութից :

— Նստեցրե՞ք դրան իր տեղը ։ Յեկ ։ իսկեցե՞ք  
ճնճղուկը :

Կամոն հնազանդ նստեց իր տեղը, սակայն ճնճղուկը  
խելու ժամանակ դիմադրություն ցույց տվեց :

— Զեմ տա Պետկային, — համառորեն կրկնում եր նա:

Եեվ յերբ արդեն տանում ելին ճնճղուկին, նա բողոքի ձայնով դեռ շաբունակում եր գոռալ դատավորի վրա:

— Վերադարձրեք Պետկային: Վերադարձրեք Պետկային:

Դատավորը խորհրդակցում եր դատարանի անդամների հետ:

— Եքսողերտներ, ինչքրում եմ հաղորդել ձեր յեղակացությունը:

Յերկու Եքսողերտն ել համամիտ ելին.

«Ի նկատի ունենալով աննորմալության անկասկածելի նշանները՝ անհրաժեշտ էնք համարում մեղադրյալն բժշկական քննության յննթարկել»:

Դատարանը լսելով Եսողերտիդայի կարծիքը, վեր կացավ և հեռացավ խորհրդակցելու:

Դահլիճում աննկարադրելի հուզմունք եր սկսել: Վոմանք կամոյի վարքը հալած յուղի տեղ ելին ընդունել և գառնորեն ախտոսում ելին հալածանքներից կոտրված այդ մարտիկին, վորի պայծառ դիտակցությունը մարել եր: Մյուսներն անորոշ կերպով հատկանում ելին և ճշմարտությունն իմանալու նպատակով ձգտում ելին դեղի կամոն՝ աշխատելով նրա դեմքի վրա դանել այդ հանելուկի բանալին:

Խորհրդակցության սենյակում դատավորներն աշխուժաբար կարծիքներ ելին փոխանակում, թերթում ելին հաստ «Դործը»-ը, մատը ցցում առանձին եցերի վրա, լուռում և նորից վիճաբանում:

Վերջապես, դատարանի նախադաշն արտահայտվեց վորոշակի:

— Ահավտոսիկ դերմանական եքսողերտիկայի յեղակացությունը: Մեր եսողերտներին մենք քիչ առաջ լսեցինք: Մեղադրյալի վարքն ել մենք տեսանք դատարանում... Յելնելով հիշյալ պարագաներից՝ յես կողման կից եմ, վորպեսզի գործը հետաձգվի, մինչեւ բժշկական ուշադիր հետազոտություն կատարելը:

Դատարանի անդամները համաձայնեցին նրա հետ: Ու նորից:

— Դատարանը դալին ե: Վո՞տքի:

Բոլորը ձգվեցին՝ բուռն անհամերտությամբ սպասելով վճռին:

Յել յերբ իմացան, վոր գործը հետաձգել ե, նորից լսելու բժշկական քննությունից հետո, բոլորը ըունչ քաշեցին թեթևացած և հուսով լի. մի՞թե քիչ բան կարող է պատահել ազադացում:

## 6.

Կամոյին փոխադրեցին Միքայելյան հիվանդանոցի գժանոցը:

Նրա տեղափոխության որը հիվանդանոցի չուրջը վորոշ շարժում եր նկատվում: Յեկավ վոստիկանների ջոկատը դրսի պահպանության համար: Այդ ջոկատն իր չուրջը համաքեց մի շարք թամաշաշիներ, վորոնք քըննում ելին այդչափ արտասովոր յերկույթի պատճառները:

— Պարզ ե, վոր նշանավոր վորոնք մեկին են բերել և հսկելու յն:

— Տես, պահակային պօստեր են կանգնեցնում: Հիվանդանոցի բերելուց հետո կամոյին հիվանդանո-

շային խալտթ հազցը ին և վերջնականապես խլեցին նրա  
ձեռքից Պետկային:

Կամոն շատ եր վշտանում, ցալում ու խնդրում:  
— Տվեք Պետկան, տվեք իմ պետկան...

Նրա սիրութ ճմլվում եր այն մտքից, թե ինքը պետք  
ե կրկին սիրությացիա անի, կամքի և ուշադրության ա-  
մենամեծ լարումով շարունակի հետեւ իրեն, նորից  
ծաղրածույն դեր խաղա, կեղծելով լաց լինի կամ ծիծա-  
ղի և դրա հետ միասին կատաղությունից ատամները  
կրծտացնի:

Հենց վոր նրան տարան առանձին հիվանդասենյա-  
կը, նա ստեց և անշարժ մնաց այդ դիրքում՝ ձեռքերով  
ծնկները գրկած:

Ներս յեկող բժշկին նա դիմավորեց մոչեղին աղա-  
ղակով:

— Հեռացրեք մկներին: Հեռացրեք մկներին:  
— Ի՞նչ մկներ:

— Սեղանի տակ կրծում են:

Բժիշկն սկսեց հանգստացնել նրան: Կամոն հետզե-  
տե սուս կացավ: Իսկ հետո խորմանկ կերպով հոնքերի  
տակից նայեց բժշկին:

— Բա վոր յես չորս միլիոն փող ունեմ թաղած:  
— Վո՞րտեղ:

Յեվ կամոն բժշկին մասխարա զցեց.

— Չեմ ասի: Ապա՛, դե կե՛ր:

Այդպէս սկսեց փորձությունների այդ նոր շրջանը  
կամոյի համար: Տաղտկալի միորինակությամբ անցնում  
եյին որեք ու շաբաթներ: Սկզբում ծառայողները վախե-  
ցած այն հանդիսավորությունց, վորով ուղեկցվեց կա-  
մոյի յերեալը հիվանդանոցում, խուսափում եյին նրան-

նից և վարվում լսիստ պաշտոնական, բայց հետո նրա  
ուրախ ու հանդիստ բնավորությունը, նրա սիրալիրու-  
թյունը դեպի ամենքը, կամաց-կամաց գրավեցին ընդ-  
հանուրի համակարանքը: Խախտելով կամոյի համար սահ  
մանված հատուկ կանոնները՝ ծառայողները նրան ել մի  
շարք դյուրություններ տվին, ինչպես մյուսներին ու  
ժամանակի ընթացքում նրա և մյուսների մեջ յեղած  
տարբերությունն սկսեց չըանալ:

Հիվանդանոցում, յերբ վերջանում եր բժիշկների  
շրջադայությունը, սկսվում եր ազատ կյանքը: Վերա-  
կացուները բացում եյին հիվանդասենյակները և հի-  
վանդները դուրս եյին յենում ընդհանուր միջանցքը:

Այսուեղ զրադվում եյին թղթախաղով: Վերակացու-  
ներից գլխավոր թղթամոլները Բրագինն ու Ժղանկովն  
եյին:

Հիվանդներից շատերն անվարժ եյին խաղում, լավ  
չեյին հասկանում թղթախաղի կոմբինացիաները, խախ-  
տում եյին խաղի որենքները, տաքանում, կռվում և  
պատռում եյին խաղաթղթերը:

Կամոն յերբեք չեր մասնակցում խաղին, սակայն վո-  
րոշ ժամանակից հետո սկսեց ներկա լինել խաղերին  
և զանազան դիտողություններ անել:

Մի անգամ այնպես յեղավ, վոր թղթախաղից հետո  
նա սկսեց պատմել զանազան դեպքեր՝ իր արկածներով  
հարուստ կյանքից: Նա զգուշ եր և իր կապակցիած  
պատմություններն ընդհատում եր տեսակ-տեսակ ան-  
հեթեթություններով, վորսկեսզի հոգեկան հիվանդի  
տապավորություն թողնի:

Ծառայող Բրագինին առանձնապես հետաքրքրում  
եյին «արտասահմանի մասին» պատմածները: Այժմ ա-

մեն անդում , յերբ իսակը պերջանում եր , նա ասում եր  
սամոյին :

- Նու , հիմա պատմի՛ր :
- Ինչի՞ մասին :
- Արտասահմանի :

Յեվ կամոն պատմում եր : Նա զլսում սկսում եր  
առաջանալ մի ինչ վոր , առայժմ դնու անորոշ ծրագիր ,  
վոր վերաբերում եր Բրադինին :

Նա շատ վառ գույներով պատմում եր , թե ինչպիսի  
հետաքրքիր կյանք կա արտասահմանում , ինչ հեշտու-  
թյամբ կարելի յե սովորել այնտեղ վորեւ արհեստ ,  
վորեւ մասնադիտություն և հետո հիանալի կերպով աշ-  
խատել իր ամբողջ կյանքում : Պատմում եր այն մասին ,  
վոր այնտեղ ժողովրդի համար հեշտ և ասվել , քան մեղ  
մոտ , վոր այնտեղ չկան այնպիսի բռնություններ ու  
անորենություններ և աշխատավորների մեջ չկա այն աղ-  
քատությունը , ինչպիս Ռուսաստանում :

Բրադինին ավելի ու ավելի եյին գրավում այդ խո-  
սակցությունները :

— Իսկապես այդ ամենն այլպի՞ս և , վոնց վոր  
պատմում ես : Այ թե մարդ թուչի ենտեղ , քան սովորի ,  
իսկ հետո սաստանան դիտի... Իսկ ենտեղ նստում ես ,  
նստում ու վոչ մի ճար-ճամբար չես դտնում...

Յեվ Բրադինը յերազելով նայում եր իր առջև :  
Կամոն նրան հարցնում եր .

- Իսկ զու կուղեյի՞ր գնալ արտասահման :
- Բա չելի ուղի՞ :

— Կմտածենք դրա մասին :

Ու նորից անցնում եյին շաբաթներ :

Տառերորդ անգամ դաշիս եյին բժիշկները . չոչո-

փում , արորում կամոյին , հարց ու փորձ անում , ինչ  
վոր յեղբակացություններ կազմում , նորից հեռանում :

Մի անգամ կամոն վոտնաձայներ լսեց միջանցքում :  
«Դարձյալ ինձ մոռ»—մտածեց նա :

Յեվ նրա դիմքը վայրկենաբար վոխվեց—դարձակ  
վայրենի ու անխմաստ : Կամոն սկսեց վաղել սենյակում .  
ինչ վոր բան վորսալ ողում , պատերի վրա , սեղանի  
տակ նստում եր ծալապատիկ ու ելի վեր կենում :

Հիվանդասենյակ մտան բժիշկն ու մի չինովնիկ :

— Դու ի՞նչ ես անում :

— Յե՞ս :

Կամոն ընդհուպ մոտեցավ բժշկին :

— Յես Գետկային եմ վինտում : Տվեք ինձ Պետկան ,  
յես կամենում եմ խոսել նրա հետ մի կարեւոր գործի մա-  
սին : Սա ի՞նչ խայտառակություն ե , տվեք Պետկան . . .

— Դե՛ , դե՛ հանգստացիր :

Բժիշկը մոտեցավ փոքրիկ սեղանին , ուր դարսված  
էին կամոյի թղթերը :

— Իսկ այդ ի՞նչ հաշվովներ եք անում դուք այս-  
տեղ :

— Յես Սիրիրի վրայով կերթամ Սմերիկա : Իմ ավ-  
ագումորիլը տասը ուժանոց կլինի : Այ , յես դրա նախահա-  
շիվն եմ կազմում :

Բժիշկը դիմեց չինովնիկին .

— Տեսնո՞ւմ եք , թե ինչ դրության մեջ և : Այբող-  
ջապես , ինչպիս վոր կա : Բայց և այնպես հայտարարե-  
ցեք նրան , ինչ վոր պետք ե :

Ու մինչդեռ չինովնիկը կարդում եր , կամոն ուրախ  
մշշացնում եր :

Չինովնիկը կարդաց .

«Կովկասյան զինվորական-շրջանային դատարանի և  
կովկասյան շրջանի զորքերի հրամանատարի համաձայ-  
նությամբ Սիմոն Պետրոսովից դեմ, նա ինքն և կամո,  
քրեական հետապնդումը ղաղաքեցվում է, պահելով  
նրան կալանքի տակ, մինչև առողջանալը»:

Այդ թղթի ընթերցումը փոքրիկ տպավորություն  
անդամ չլուրեց կամոյի վրա:

Նա մոտեցավ բժշկին, հանեց նոր ժիշտաի գրադա-  
նից ժամացույցը, նայեց և տեղը դրեց:

— Ժամը տասն ե: Լավ ե:

Այդ նույն որը, ուշ յերեկոյան, յերբ առեն ինչ լուս  
եր հիվանդանոցում, Բրադինը կամացուկ բացեց հիվան-  
դանոցի դռուը և ներս մտավ:

— Դեռ չե՞ս քնել:

— Չեմ քնում:

Բրադինը տատանվում եր մի քանի վայրիյան, անո-  
րոշության մեջ, մի անկյունից մյուսն եր բայրում: Հուն-  
կարծ հարցրեց.

— Ա՛յ դու միշտ արտասահմանի մասին ես պատ-  
մում: Իսկական դրուստ ա եղ:

— Իսկական դրուստ ա:

— Դու ու քո աստվածը:

— Յես ու իմ աստվածը:

Յեվկամոն տասներորդ անդամ վողեռորված ոկտեց իր  
պատմությունները:

Բրադինը յերկար լսում եր նրան, իսկ հետո հարց-  
րեց:

— Խղճով ասա ինձ, կամո, դու իսկական խելա՞ռ  
ես, թե ձեռ ես առնում:

Կամոն իր հերթին մի քանի վայրկյան տնտղում եր  
նրան:

— Իսկ դու ի՞նչպես ես կարծում:

— Կարծում եմ, վոր ձեռ ես առնում:

— Ինչո՞ւ յես այդպես կարծում:

— Վորովհետեւ: Սկզբում դու շատ խորամանի կեր-  
պով ետ ոյինը խաղացիր, յես հետեւում եյի քեզ—ե  
միշտ ել դու միատեսակ եյիր, թե մարդկանց ներկա-  
յությամբ, թե առանց նրանց, թե մեծերի մոտ, թե  
առանց մեծերի: Հետո դու թողիր այդ բանի: Հենց վոր  
մեծերը դալիս են, գժությունն բանում ե, նրանք զնում  
են թե չե, քեզ վոչինչ չի լինում:

— Ուրեմն դու նկատե՞լ ես այդ:

— Պարզ բան ե, վոս նկատել եմ:

Դեհ, հիմա լսիր, Են ինչ եմ ասում քեզ, Բրադին:  
Եხս նույնական խելազաւ եմ, ինչպես և դու: Ծեթե կու-  
զես, զնա ու մատնիր ինձ.

Կամոն հառել եր իր սուրբ աչքը նրա վրա:

Բայց Բրադին՝ ուշերդն եր մոխովում:

— Զե, ինչո՞ւ մատնել: Դու լսվ տղա յես, իսկ յես  
ել մատնիչ չլիմ: զրա համար ինձ փող չի տրված:

— Թե վոր եղական ե՝ ողնիր ինձ, Բրադին:

— Ինչո՞ւմ քեզ ողնեմ:

— Ողնիր ինձ փախչել և դու ել փախիր ինձ հետ: Սահմանի վրա յես բարեկամներ ունեմ, մենք, կանցնենք  
ահմանը և քեզ կթաղցնենք: Յես այստեղ կոդնեմ քեզ  
տովորելու, և դու մարդ կդառնաս: Իսկ այստեղ—ի՞նչ  
ապագա ունես դու: Վոչ մի ապագա: Համաձա՞յն ես  
դու ասածիս:

— Բա վոր բռնե՞ն, ախր խիստ կպատժեն:

— Մեղ չեն բանի: Յես շատ ընկերներ ունեմ գըր-  
սում: Համարձակ մարդիկ: Դե՛, զու յել վորոշ բան  
գիտես իմ կյանքի մասին—յես ինքս վոչխար չեմ: Հա-  
մաձա՞յն ես դու սրան:

Իրադինը տատանվում եր՝ սեղմելով ու բաց անելով  
իր ձեռքերը:

— Սպասիր, չի կարելի մի անդամից:

Յեվ նա տանջվեց ու մի յերկու ժամ մտածեց այդ  
դիշեր:

Իսկ հետո նորից յեկավ Կամոյի մոտ, վոր նույն-  
պես չեր քնում և սպասում եր նրա պատասխանին:

— Ինչ ուզում ե, թող լինի: Յես համաձայն եմ:  
Գուցի դլուխս ել կործանեմ, բայց զու յել շատ լավ տղա-  
յեմ:

— Այդ դեպքում յես մի դրություն կդրեմ իմ քրո-  
ջը, տար նրան:

Ու Կամոն մի կտոր թղթի վրա գրեց.

«Յես ուզում եմ ազատվել: Քոի վրայի պատուհա-  
նից: Խոսիր ընկերների հետ»:

Կամոյի նամակը չդարձացրեց Զավահիրին: Նա լով-  
եր ճանաչում իր յեղբորը, նրա անդուսպ եներգիան ու  
կամքը: Քրոջ համար պարզ եր, վոր Կամոն յերբեք չի  
համաձայնի դժանոցում պասիվ նստել, դիտեր, վոր վաղ  
թե ուշ յեղբայրը կմտածի փախուստի մասին:

Այդ փախուստի հնարավորությունը շատ անդամ  
եր քննվել ընկերների շրջանում: Առաջարկում և վեր-  
լուծում եյին զանազան ծրագրներ, վոր քննադատվում և  
փոխարինվում եյին նորերով:

Կամոյի դրածից կարելի յեր հասկանալ, վոր անմի-

ջական փախուստը նա իր վրա եր վերցնում և հարկա-  
վոր եր միայն մտածել հետաղայի առթիվ. վո՞րուեղ  
թաղնվել թիֆլիսում, և ի՞նչպես դուքս պրծնել քաղա-  
քից:

Զավահիրը մի բաժակ գինով հյուրասիրեց Բրադի-  
նին և խնդրեց պատասխանի համար անցնել հաջորդ  
որը:

Հենց նույն որը յերեկոյան կայացավ ընկերների  
խորհրդակցությունը: Հիվանդանոցի գեպի Քուռը նա-  
յու պատուհանից փախչելու պլանը մանրամասն քննու-  
թյան եր առնված, բոլոր դիրքերը վերլուծման եյին  
յենթարկվել մինչև ամենափոքրիկ մանրամասնություն-  
ները: Ամենքը հասկանում եյին, վոր անհաջողությունը  
մանրամասնությունները: Ամենքն հասկանում եյին, վոր  
չափազանց դժվարացնելու յե կամոյի դրությունը,  
բացելու յե նրա սիմուլյացիան և նորից նրան կանդեց-  
նելու յե մահվան սպառնալիքի առջև:

Փախուստի համար պետք եր ճարել վոքրիկ սղոց-  
ներ, լորդիկ, պարանի կտոր և ատրճանակ: Այդ բոլորը  
վճռված եր պատրաստել մյուս որն առավոտյան:

Հաջորդ որը Բրադինը յեկավ Զավահիրի մոտ և  
նրանից գրություն ստացալ կամոյի համար: Այնտեղ  
գրված եր.

«Սպասում ենք, ամբողջ շարաթ որը: Ուղարկի՛ր ո-  
մեն բանի համար, ինչ վոր քեզ անհրաժեշտ լինի»:

Յեվ Զավահիրը մանրամասն բացատրեց Բրադինին,  
թե ուր պիտի դնալ անհրաժեշտ իրերի համար:

Քրոջ դրածը կարդալով՝ կամոն հարցրեց.

— Դու գիտե՞ս, թե ուր պիտի դնալ:

— Գիտեմ:

— Գնա՛ :

Ու Բրադինը ճամբա ընկալ :

Նա գնալու յեր Վերայի գերեղմանատունը :

Այսուեղ գերեղմանների արանքում նա տեսավ բարձրահասակ, նիհար ու արծվաքիթ մի մարդու, վորմտալրադ քայլում եր շավլով :

Բրադինը կանդ առավ նրա մոտ :

Բարձրահասակը կանդ առավ նրա մոտ :

Բարձրահասակ մարդը հարցրեց .

— Ո՞վ ես դու :

— Յես Բրադինն եմ :

— Տար, ահա սրանք :

Յել տվեց նրան մի փոքր կապոց, վորի մեջ դրված յիին սղոցներ, լորդիկ, թոկ և բրաունինդ :

Յերբ Բրադինն այդ կապոցով մտավ հիվանդանոց, նրան դուր յեկավ այդ արկածը : Նա վախկուս չեր և ամեն մի խորհրդավոր ու ոխսկով բան դրավում եր նրան :

Հիվանդանոցում Բրադինը մի ակնթարթում կապոց կամոյի ձեռքը դրեց ու անհայտացավ :

— Սրա մեջն ե ամեն բան, ինչ վոր հարկավոր ե : Այդպես ասին նրանք :

Այդ որն ուրբաթ եր, իսկ փախուստը պետք ե կատարվեր մյուս որը—շաբաթ :

Մինչև զիշերվա վրա համելը, ժամերը ձանձրալի յիին աղցնում :

Կամոն պահեց կապոցն անկողնի մեջ և պառկեց նրա վրա, կարծես անառողջ եր զդում իրեն :

Հերթապահ վերակացու ժամանովը նույնիսկ հարցրեց .

— Ի՞նչ ես թթվել, յեղբայր : Հիվանդնդ ես, ի՞նչ ե :

— Գլուխս ցավում ե :

— Վոչինչ, դատարկ բան ե : Թբիլիք յերեսորբիջը և ալինդ կապի՛ր, կմեղմանա :

Հիվանդանոցում հետզհետե քուն եյին մտնում : Պուել եյին հիվանդների ձայները, ընդհատվել եր անցուղարձը միջանցքում : Իսկ կամոն դեռ ելի պառկնը ու ապասում եր : Սպասում եր այն բավեյին, յերբ ամեն ինչ քուն կմտնի : Նա դիտեր, վոր ավելի ուշ քնում են նաև վերակացուները, յեթե նրանց վոչ վոք չի անհամարստացնում :

Գիշերվա ժամը մեկին մոտ կամոն կապոցից հանեց լորդիկը և սղոցները, սղոցն անցկացրեց լորդիկի արանքը, թաղցրեց խալաթի փեշի տակ և դուռը բաղխեց :

Քնաթաթախ ժամանովը բացեց դուռը :

— Ի՞նչ ես ուղում :

— Արտաքնոց :

— Դե՛ գնա :

Յերկու արտաքնոցների առաջ կար մի փոքրիկ նախասենյակ՝ լվացվելու համար : Մտնելով նախասենյակը, կամոն մի քանի վայրկյան ականջ դրեց, այնուհետե կամացուկ, ինչպես կատու, թռավ լվացարանի վրա և ուսեց սղոցել պատուհանի վանդակը : Նրան հարկավոր եր սղոցել յերկու ձող—մեկը յերկայնության, մյուսը լայնության :

Դա շարունակվեց տանջելու չափ յերկար : Յուրաքանչյուր բոսկ վերակացուներից կամ հիվանդներից մեկը կարող եր դալ արտաքնոց, և այն ժամանակ կամյի գործը կբացվեր :

Նա կատաղաբար սղոցում եր, քրտնքի մեջ կորած, կանդ առնում, լսում և նորից սղոցում:

Վերջապես յերկու ձողերն ել սղոցված եյին: Դրանք հաղիվ հաղ եյին պահվում լուսամուտի վրա: Կամոն գրպանից հանեց մի կտոր սե հաց, ծամեց և ծեփեց սղոցած տեղերը, վորպեսզի գրանք չփայլեն:

Այնուհետեւ դուրս նայեց պատուհանից: Լուսնի տակ պապղում և կնճռոտում եր արծաթահոս գետը: Ներքեւում նա նշմարեց խճաքարերի կույտը: Մինչեւ այդ կույտը հինգ մետրաչափ կլիներ:

— Զնէին բան ե, — ասաց ինքն իրեն կամոն՝ աղաւաթյամբ չնչելով գիշերային թարմ ողը:

Նրա առաջն եր աղատությունը, անկաշկանդ ու անարդել, և նրա ոռունդներն ուռչում եյին ուրախությունից:

Մի վայրկյանից հետո նա կատվի նման անաղմուկ շատկեց հատակին ու զնաց իր սենյակը:

Քնակոլոր ժղանովը սեղանի վրայից բարձրացրեց իր ծանրացած զլուխը և մրթմրթալով զիմավորեց նրան.

— Իսկ յես կարծում եյի, թե դու ենտեղ ես պառկել, քնել:

— Ստամոքս և խանդարվել:

— Այ, հենց դրանից ել զլուխդ ցավում ե:

— Ժղանովը զնաց վերակացուների սենյակը:

Կամոն դարձյալ մի կես ժամ սպասեց՝ շունչը պահած հանդստանալով:

Չորս կողմը տիրում եր խորը լուսւթյուն: Հիւլանդանոցը քնած եր:

Այդ ժամանակ կամոն տեղում կերպով սկսեց սղ-

ցել իր չլթաները: Սղոցելուց հետո, չղթաները միացրեց յերկաթալարով, վոր չընկնեն ցած: Այնուհետեւ սղոյներն ու լորիդիկը խնամքով պահեց իր ներքնակում, իսկ թոկն ու ատրճանակը թագցրեց բարձի տակ:

Այժմ բոլոր պատրաստություններն արված եյին և մնում եր սպասել այն որվան, վորն իր հետ վճռական գեղքեր եր բերելու:

Քնել կամոն անկարող եր և ժամանակը տանջելու չափ գանդաղ եր ընթանում:

## 7.

Շարաթ որը վաղ առավոտվանից կոտեն նստել եր Քուռ գետի ամին՝ մի փոքրիկ կասոց թեր տակ դրած:

Ուղիղ նրա գիմաց, դետի մյուս ամին ձգվում եր Միքայելյան հիվանդանոցի պատը: Պատի վրա կա մի վոչ մեծ պատուհան, — հենց այն, վորտեղից պետք ե յերեար կամոն:

Կոտեն նստել եր գատարկապորտ մարդու գիրքով, ցնցոտիներ հաղած և շփշփանում եր անտարբեր: Բայց նրա աչքերն անդադար աչալլջությամբ հառել եյին դեպի պատուհան՝ աշխատելով նշմարել վորեւ մի բան, վոր ակնարկեր կամոյի շուտափույթ յերեալու մասին:

Մինչես պատուհանի յետեռում ամենայն ինչ հանդիսաւ եր կարծես:

Կոտեյից այն կողմը, կամրջին մոտիկ ծալապատիկ նստել եր լինցի կինը և նույնպես անտարբերությամբ ծղոտի ցողուն եր կրծում: Նա այսուղ նսել եր կապ պահպանելու համար, յեթե վորեւ չնախատեսնված գեղաք պատահեր:

Իսկ այդ ժամանակ կամոն իր վերջին պատրաստություններն եր տեսնում :

Հիվանդանոցում սկսեցին թեյ բաժանել հիվանդներին : Վերակացուներն զբաղված եյին այդ դործով :

Կամոն ըրառնինքը և թոկը թաղցրեց խալաթի տակ և դուռը բաղիսեց :

Ժղանովը բավական ուշացավ :

— Ի՞նչ է :

— Փորս ցալում է ելի :

Ժղանովը բացեց դուռը և ուղեկցեց կամոյին մինչև զուգարան :

— Դեհ, հանդստացի՛ր :

Հենց վոր դուղարանի առաջ յեղած դեպի նախասենյակ տանող դուռը փակվեց, կամոն թուավ լվացարանի վրա, վայրկենապես կոտրեց վանդակի յերկու սղոշած ձողերը, թոկը կապ դցեց, նետեց իր հազի շորը և բարձրացավ լուսամուտը :

Բարձրանայիս նա գետի մյուս ափին նկատեց կոտեցի կերպարանքը :

Սակայն թոկը կտրվեց և կամոն վայր դլորվեց խճի շեղակույտի վրա...

Կոտեն սարսափահար դեպի ջուրը վալեց : Նա կածում եր, վոր կամոն ջաղջախալեց և անմիտ կերպով ամեն ինչ կորավ վերջին բուռեյին...

Բայց կամոն առածգականորեն վոտքի յելալ, նետվեց ջուրը և մի քանի վայրկյանից հետո կամքի տակ արդեն իր վրա եր դցում այն հագուստը, վոր կոտեն նրանուն եր կոխում :

Դրանից հետո նրանք յերկուսն ել մի փոքրիկ կածանով բարձրացան Քոի բարձր ափը, սայթաքելով ու

72.

Ընկնելով, չնչները կարած արագ վաղքից : Այնուեղ նրանց սպասում եր մի կառք՝ մի զույդ կրակոտ ձիերով, վորոնք ոլացան, պայտերի տակից կայծեր շաղ տալով : Կամոյի անհայտացումը հիվանդանոցում հայտնաբերվեց կես ժամից հետո :

Սկսվեց աննկարագրելի իրարանցում : Բժիշկները, վերակացուները, բուժակները հիվանդանոցում դեռ ու գեն եյին ընկել կամոյին վորոնելու համար : Վոստիկանների դրսի պահակները հիմար դրության մեջ եյին ընկել, վորովհետև կամոն փախել եր հենց այն կողմով, ուր պահակներ չկային : Նրանք ել իրենց հերթին տակն ու վրա եյին անում հիվանդանոցի շուրջն յեղած բոլոր ծակուծուկերը :

Վերջապես նկատեցին զուգարանի կողքի ողոցած պատուհանը, պատի տակ աղբակույտին ընկած թոկը, իսկ հետո գտան նաև սղոցները կամոյի ներքնակի մեջ : Պարզ յեղավ, վոր թռչունը թռել եր :

Պոլիցիան և ժանդարմեները բռնվել եյին հուզմունքով : Զնդում եյին հեռախոսի զանգակները, ուանում են յին լրաբերները : Դրված եյին պահպաններ և լրտեսներ փողոցներում, բոլոր խճուղիների վրա : Կաղակները և ձիավոր պոլիցիականներն աղաղակներով հարձակվում եյին ամեն կողմ : Կար անտեղի վագվող, շատ մեծ աղմուկ եր բարձրացել, բայց գործնական կարգադրությունները քիչ եյին :

Ժանդարմական վարչության պետը զեկուցագրեց զորքի հրամանատարին :

«Պատիվ ունիմ տեղեկացնելու ձերդ բարձր գերազանցության, վոր քաղաքն ամբողջապես ողակված եւ Փախած վոճրագործը վոչ մի հնարավորություն չունի

73

քաղաքից անհետունալու : Իսկ քաղաքում նա անկատկած կդանվի :

Այդ ժամանակ Կամոն դանալում եր մի ծերուկ հնագաճարի մոտ, տանը, վորի վորդում պոլիցիականները սպանել եյին շուրջկալի միջոցին :

Այդտեղ եյին նաև ընկերները :

Դրությունն իրոք շատ ծանր եր : Մի կողմից մնալ թիֆլոսում, ուր չնշն պատահականությունը կարող եր մատնել նրան, ուր համարյա թե ընդհանուր շուրջկալ ների կարելի յեր սպասել, — չափազանց վտանգավոր եր : Մյուս կողմից—կայարանը և բոլոր ճանապարհներն ու խճուղիները, վոր ծայր եյին առնում քաղաքից, լոված եյին զինվորներով, և պոլիցիականներով : Քաղաքն իսկապես, վոր ամբողջովովին ողակված եր :

Ի՞նչպես դանել յելքն այս դրությունից :

Կոտեն, վոր լուս եր շարունակ, վերջապես ասեց :

— Մի միտք կա գլխումս : Ժամկետ տվեք մինչեւ վաղը : Յես կիրոքեմ :

— Վո՞րն ե քո միտքը :

— Հետո կիմանաք :

Յեվ հենց այդ յերեկո կոտեն դնաց իր բարեկամ պատանի գիմնազիստների մոտ :

Հավաքեց նրանցից մի քանի հոգու և դիմեց հետեւյալ առաջարկով .

— Տղերք գուք լավ ջահելներ եք, յես ձեղ ճանաչում եմ : Դուք հո դատարկախոսներ չեք, վոր դուրս տաք այս, ինչ, վոր ձեղ ասելու լինենք : Յես մի շատ լուրջ առաջարկ ունեմ ձեղ ասելու :

Բոլորը սրեցին ականջները՝ աչքերը չոելով կոտեյի վրա : Այդ պատանիների շրջանում լեզնդաներ եյին

պատմում կոտեյի մասին, և նա մեծապույն հարդանք էր ներշնչում նրանց :

Բոլորն անհամբերությամբ սպասում եյին :

— Զեզնից ողնություն ե պետք հեղափոխությանը :

— Ի՞նչպիսի :

Ցերեություն շատ հասարակ : Դուք պետք ե ավելի մեծ կամպանիա հավաքեք, աղջիկներին ել նույնպես, և Հեծանիվով դրսնեք խճուղու վրա, քաղաքից դեպի ուղեկալը և հետ դեպի քաղաք : Յեվ, վոր այդ ամենը պետք ե աղմկալի և ուրախ անցնի :

Նրանք հիասթավիված, հարցըրին կոտեյին :

— Յեվ ա՞յդ և բոլորը : Իսկ ինչո՞ւ համար և հարկավոր դա :

— Թե ինչո՞ւ համար ե հարկավոր, յես ձեղ հետո կասեմ, յերբ գուք կիվրջացնեք ձեր գործը : Ինկատի առնեք, վոր դա շատ լուրջ գործ ե... Դեհ, ի՞նչ եք առում, համաձա՞յն եք :

Իհարեւ, բոլորն ել համաձայն եյին : Պայմանագրվեցին, թե մյուս որն յե՞րբ սկսեն զբուանքը և վո՞ր աղեկակի մօս :

Վերջում կոփեն ասաց :

— Աչքի առաջ ունեցեք, վոր զինվորները կկանգնեցնեն ձեղ, յերբ գուք ուղեկալով անցնեք, բայց դուք նրանց պահանջի վրա յետ դարձեք ու նորից անցնեք ուղեկալի միջով : Այդպես եք անելու վաղն ամբողջ որը, ճաշեց մինչեւ յերեկո : Հասկացա՞ք :

— Բոլորս ել հասկացանք :

Յեվ զիմնաղիստներն իսկույն սկսեցին կազմել տղաների ու աղջիկների ցանկը, վորսն կարելի յեր այդ գործին հրավիրել :

Հաջորդ որը, ձաշից հետո ուղեկալի մոտ, ինչպես,  
վոր պայմանավորված եր, աշխուժ յերթեսկություն  
ակսվեց: Մոտ յերկու տասնյակ դիմնազիստներ բարձր  
գասարաններից և միքանի աղջիկներ հնչյուն ծիծա-  
ղով ու կատակներով, միմյանց ձայնելով ու յերդելով՝  
մի արշավանք եյին սարքել հեծանիվների վրա:

Այնուհետև մի քանի հոգուց բարկացած խմբեր ե-  
քին կաղմում և սրբնթաց ճեղքում-անցնում ուղեկան ու  
ընկում խճուղին:

Զինվորներն աշխատում եյին փակել նրանց ճանա-  
պարհը և դոռում եյին.

— Յետ: Յետ: Իրավունք չկա:

Յեվ դիմնազիստները զինվորների հրամանով դետի  
քաղաք եյին դառնում ուրախ ու աղմկաց:

Սակայն մի բոպէ հետո դարձյալ սկսում եյին նույն  
բանը:

Այդ ամենը շուտով ճանձրացրեց զինվորներին և  
նրանք դադարեցին ուշադրություն դարձնել հեծանի-  
վալվորների վրա:

Դիմնազիստները կանգ եյին առնում զինվորների  
մոտ, իջնում հեծանիվներից, ծխախոտ հյուրասիրում  
զինվորներին և խաղաղ դատարկաբանում: Տիրում եր  
հանաքների, ծաղրի ու սրամառության բարեկամական  
ժինուրտ:

Իսկ այդ ժամանակ մի բանվորի բնակարանում  
կամոն ու կոտեն ածիլում եյին իրենց բեխերն ու մո-  
րուքը, գրիմ անում, հազնում դիմնազիստն շալվարն  
ու բաճկոնը, ձգում գոտիկները, վորպեսզի վորքան  
կարելի յե ջահել յերեան:

— Այս, թե վոր այս խաղը հաջողվի, կամո, դու  
կրկին արտասահմանում կլինես:

Կհաջողվի: Մենք ենք դործ բռնողը:

Նրանք հեծանիվ նստեցին, և արադ սլացան՝ խուլ և  
սակավամարդ փողոցներ ընտրելով: Անցնելու ժամա-  
նակ վոչ վոք ուշադրություն չդարձրեց նրանց վրա:

Ուղեկալի մոտ նրանք միացան պատանիների խըմ-  
բին: Զայներն ու ծիծաղն ավելի բորբոքվեցին:

— Տղերք, յեկեք մեծ մրցարշավ սարքենք:

— Մրցարշավ: Մեծ մրցարշավ:

Յեվ մոտ քան մեքենա միատեղ հավաքված միան-  
գամից նետվեցին ուղեկալից այն կողմը:

Զնացողների մեջ եյին կամոն ու կոտեն:

Պահապանների պոստի մոտով անցնելիս՝ նրանք  
ճայնում եյին զինվորներին, ծիծաղում, գլւարկներով  
թափահարում: Յեվ զինվորները ծույլ-ծույլ ու բա-  
րեսրտորեն կատակում եյին, վոր աղատվեն նրանցից:

Հասնելով մինչև խճուղու վոլորանը՝ ամբողջ խում-  
բը կանգ առաջ և ցած իջավ մեքենաներից:

Միայն կամոն ու կոտեն ամբողջ ուժով սեղմում ե-  
յին հեծանիվի վոտնատեղը և առաջ սլանում՝ նվաճե-  
լով վերսոր վերսորի յետնից:


Մյուսները մի փոքր սպասելուց հետո՝ վերադար-  
ձան դեպի ուղեկալը:

Նրանք նոր միայն հասկացան, թե ինչու համար եք  
ասրբել այդ ուրախ զբոսանքը:

Վոչինչ չկասկածող զինվորներն առաջվա նման բա-  
րեմիտ ժպիտով դիմավորեցին պատանիների իմբին:

Սաստիկ քրտնած արադ արշավից՝ կամոն հարցրեց.

— Իսկ այժմ գեղի ո՞ւր, կտե:



— Այժմ գհանք հարսանիք—մի ծանոթ իշխանի  
մոռ: Դեպի Մցիսեթ:

Մցիսեթում կոտեն Կամոյին տարավ մի ընկերոջ  
տուն, ուր նրանք թողին հեծանիվները, շտապով հաղան  
աղջային սիրուն զգեստները և ուղեորդեցին իշխանի  
հարսանիքը:

Իշխանը, թեպետ և աղքատացածի մեկն եր, սակայն  
սովորության համաձայն, սիրայիր ու քաղաքալարի ըն-  
դունեց Կամոյին:

Քեֆն, իսկապես, արգեն վերջացել եր: Յերիտա-  
սարդները պար եյին բռնել: Այս ու այն կողմում դեռ  
դինի եյին կռնծում:

Կամոյին և կոտեյին առատորեն հյուրասիրում եյին:  
Բոլոր հուզմունքներից ու ջանքերից հետո նրանք հա-  
ճույքով եյին ուտում-խմում:

Այդտեղ կոտեն Կամոյին հանձնեց ուրիշի անվան  
արտասահմանյան անցագիր ու փող տվեց:

— Բարի ճանապարհ:

Նրանք իրար զարկեցին բաժակները:

Կես ժամից հետո հյուրերը շարժվեցին դեպի կայս-  
րան՝ դնացք նստելու:

Կամոն ել գնաց նրանց հետ:

Շողեշարժը սուլեց և տարավ նրան դեպի նոր սիրա-  
դործություններ, նոր տառապանքներ, պարտություն-  
ներ ու հաղթանակներ:

ԳԵՏԱՐԱՀ ՏՊԱՐԱՆ ՍՐԲ=ԿՐԵցին, Հ. Ստոիլյան, Ե. Հարօւրյանյան  
Քառ. 7914 (բ). Գառ. 2862. Հրատ. 2359. Տ/Րաժ 2000.

Հանձնված է արտադրության 5 սեպտ. 1932 թ.  
Սասրագչիված և տպագրելու 15 նոյեմբ. 1932 թ.

01000

ՏԵՂՄԱՆ ՈՒՅՈՒՆ

Օ Մ Ա

ԺԱՇՆԵՐ / ԱՆԻՑՄԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0327177

СА III  
313

ԳԻՒԸ 1 Ր.

1  
2

959

АЛЕКСЕЙ ОКУЛОВ

КАМО

ГИЗ. ССР. АРМЕНИИ ЭРИВАНЬ